# Ազգ
Azg

5 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 169(5252)

ISSN: 1829-1651


## Լոլիկներով եւ ձվերով

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀԿ երիտթեւը եւ մի շարք ՀՀԿ-ամերձ ակտիվիստներ ուզում են Զարուհի Փոստանջյանին լոլիկներով եւ ձվերով դիմավորել հոկտեմբերի 5-ին, Փարիզ- Երեւան չվերթով նրա վերադարձին: Անկախ նրանից, թե այս «հանճարեղ» միտքը ո՞ր «հանճարեղ» գլխում է ծագել, մի շարք այլ հանճարեղ գլուխներ կարող են, չէ՞, եզրակացնել, որ սա կարող է բերել բախման, քանի որ օդանավակայան կգնան ոչ միայն նրանք, ովքեր դատափետում են Փոստանջյանին, այլեւ Փոստանջյանի կողմնակիցները եւ էլ ով ասես: Է՞:

Մի ավելի խելացի բան չէիք կարող մտածել՝ բախում հրահրելուց բացի, ու կարծում եք, թե երկրի նախագահին պե՞տք է ձեր այդպիսի վայ-պաշտպանությունը: Էն է՝ նախագահի մամուլի խոսնակ **Արման Սաղաթելյանը** կոչ է անում ձեռնպահ մնալ Զարուհի Փոստանջյանին օդանավակայանում վանկարկումներով դիմավորելու նախաձեռնությունից: Թե՞ կարծում եք՝ նա ասում է մի բան, որ դուք լրիվ հակառակն անեք: Չէ, լուրջ, Արման Սաղաթելյանի ասածում ոնց որ լրջություն կա. «Մենք չենք ընդունում եւ սխալ ենք համարում ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանին օդանավակայանում վանկարկումներով դիմավորելու կամ նրա դեմ որեւէ այլ ակցիա կազմակերպելու մասին տարբեր կողմերից հնչող մտադրությունները: Բոլորին կոչ ենք անում ձեռնպահ մնալ նման նախաձեռնությունից», զգուշացնում է նախագահի մամուլի խոսնակը:



Իսկ եթե ՀՀԿ-ական երիտասարդների արյունը եռում է, եւ նրանք ուզում են անպայման իրենց նվիրվածությունը ցույց տալ երկրի նախագահին, թող նախագահի ու նրա (մեր) երկրի որդեգրած արժեքներին սատար կանգնեն, որոնք սակայն կյանքում ներդնելիս խոչընդոտների են հանդիպում:

Տես էջ 2

## Լրագրողների ջարդ Սաբիրաբադում՝ «մահ հայերին» կոչով

Երեկ Ադրբեջանի նախագահի ընդդիմադիր թեկնածու Ջամիլ Հասանլիի նախընտրական հանդիպումը Սաբիրաբադի մարզադաշտում վերածվել է արյունալի բախումների: «Ենի մուսավաթ»-ի տեղեկագրմամբ՝ Սաբիրաբադի գործադիր իշխանության ղեկավար Նազիմ Իսմայիլովն «անձամբ կոչ է արել հաշվեհարդար տեսնել Ջամիլ Հասանլիի նկատմամբ»:

Տեղի ընդդիմադիր ուժերը, սակայն, «կենդանի պատնեշ են դարձել հարձակվողների եւ Ջամիլ Հասանլիի ու ԱԺՃ առաջնորդ Ալի Քերիմլիի միջեւ, նրանց դուրս բերել մարզադաշտից»: Նախընտրական հանդիպումը դեռ չսկսված՝ ավարտվել է:

Հաշվեհարդարի նետված ջարդարարների թիրախ են դարձել Բաքվից գնացած լրագրողները: «Թուրան» գործակալության հաղորդագրմամբ՝ «ոստիկանությունը ոչ միայն չի կանխել ջարդը, այլեւ արգելափակել է լրագրողներին՝ հնարավորություն չտալով, որպեսզի վերջիններս կարողանան գոնե փախչել»:

Տուժել են «Թուրան»-ի ֆոտոլրագրող Էթիմադ Բուդաղովը, «Ենի մուսավաթ» թերթի աշխատակիցներ Ռոյա Ռաֆիեւան եւ Նարգիզ Յաղուբլին, «Ազադլիգ» թերթից՝ Ռամին Դեկոն եւ Սեւինջ Վագիֆգըզին, ինչպես նաեւ անկախ լրագրողներ Իլհամ Ռասուլզադեն, Սաբիր Բաջարանը, Ջհանգիր Յուսիֆլին, Մուհամել Թյուրքանը եւ ուրիշներ:

Բոլորն ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, իսկ «մեկ լրագողի ատամներն են փշրել»:

Հաղորդագրվում է, որ «լրագրողները մեծ ջանքերի գնով են միայն կարողացել դուրս գալ հարձակվողների եւ ոստիկանության շրջափակումից»: Ընդդիմադիր քաղաքական գործիչները շտապել են լքել Սաբիրաբադը:

Սաբիրաբադյան ջարդի նախօրեին հանրային կոչվող հեռուստատեսության ուղիղ եթերում «Իսկական մուսավաթ» կոչվող խմբավորման առաջնորդ Հաֆիզ Հաջիեւը, որին ադրբեջանական ոչ իշխանամետ մամուլը կնքել է «ընտրություններում վարչախմբի ներդրած սադրիչ», Ադրբեջանի «պատվախնդիր քաղաքացիներին» կոչ է արել «հրապարակային քարածեծ անել Ջամիլ Հասանլիին եւ Ալի Քերիմլիին, որտեղ էլ նրանց հանդիպեն»:

Իր «հայրենասիրական պատգամին» ավելի մեծ կարեւորություն տալու համար Հաջիլին «բոլոր ադրբեջանցիներին տեղեկացրել է, որ Ջամիլ Հասանլիի փեսան թեեւ հանդես է գալիս որպես անգլիացի, բայց իրականում հայկական ծագում ունի»:

Ըստ ամենայնի, երեկ Սաբիրաբադում վերստին «մահ հայերին» կոչն է մարզադաշտ հասցրել «պատվախնդիր» ջարդարարներին, որոնք մտադրված են եղել քարածեծ անել «հայի աներ-հայրիկ» Ջամիլ Հասանլիին, բայց տուժել են ադրբեջանցի լրագրողները:

Երեւույթը գուցե դաս լինի նույն այդ լրագրողների համար, որոնք Ադրբեջանում հայատյացություն սերմանելու գործում իշխող վարչախմբից ոչնչով հետ չեն մնում: Իսկ որ իլհամալիեւյան ռեժիմը քաղաքական ընդդիմախոսների դեմ ֆիզիկական հաշվեհարդար կազմակերպելիս իբրեւ «արդարացում» շրջանառում է նրանց «հայկական հետքը», Ադրբեջանում քսենոֆոբիայի եւ ռասիզմի ցցուն վկայություններն է:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՈՒՂԵՐՁԸ

### *Արժանապատիվ աշխատանքի միջազգային օրվա կապակցությամբ*

2008 թվականից Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի նախաձեռնությամբ ամեն տարի հոկտեմբերի 7-ին աշխարհի բազմաթիվ երկրներում նշվում է Արժանապատիվ աշխատանքի միջազգային օրը:

Արժանապատիվ աշխատանքը ենթադրում է ոչ միայն բնակչության զբաղվածություն, այլեւ աշխատանքային անվտանգ պայմանների ապահովում եւ աշխատողների արդար վարձատրություն, որոնք էլ հանդիսանում են թե Արհմիութունների միջազգային կոնֆեդերացիայի եւ թե Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի գործունեության առանցքային հարցերը:

Արժանապատիվ աշխատանքի միջազգային օրը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան այս տարի նույնպես հանդես է գալիս արժանապատիվ աշխատանքի ապահովման պահանջով, քանի որ այսօր յուրաքանչյուր աշխատողի երազանքն է ունենալ ապահով, արժանապատիվ աշխատանք եւ համարժեք վարձատրություն:

ՀԱՄԿ-ը, հավատարիմ մնալով աշխատողների կենսական շահերն ու իրավունքները պաշտպանելու կոչմանը, իր գործունեությամբ նպաստում է սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կայուն զարգացմանը՝ ուղղված երկրում զբաղվածության մակարդակի բարձրացմանը, արժանապատիվ աշխատանքի խրախուսմանը, սոցիալական գործընկերության կայացմանն ու զարգացմանը:

ՀԱՄԿ-ը կոչ է անում անդամ կազմակերպություններին՝ հետեւողականորեն բարձրացնել արհմիութենական կազմակերպությունների ու նրանց անդամների մասնակցությունը, ինչպես նաեւ արհմիությունների շարքերն ընդլայնել ավելի շատ երիտասարդներով:

ՀԱՄԿ-ը համոզված է, որ արհմիությունների համերաշխ գործունեությունը կխթանի արհմիութենական շարժման առաջընթացը եւ հանրության շրջանում նրա դերի, աշխատողների արժանավայել կենսամակարդակի բարձրացումը, ինչպես նաեւ աշխատանքի առողջ եւ անվտանգ պայմանների ապահովումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

## Հիմա էլ Ֆյուլեն Հայաստանը չնշեց նախաստորագրողների շարքում



**Հայաստանի նախագահը հոկտեմբերի 2-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում հայտարարեց, թե Հայաստանը գնալու է Վիլնյուս՝ Արեւելյան գործընկերության գագաթաժողովին, ու ցանկանում է նախաստորագրել Ասոցիացման համաձայնագիրը: Եթե Հայաստանի նախագահը որեւէ դրական արձագանքի սպասելու հույս չուներ Եվրոմիությունից, դժվար թե նման հայտարարություն աներ, այլապես կստացվի, թե նախագահն իր բաղձանքն արտահայտեց, որը ԵՄ-ում լսելու ցանկություն չկա:**

**Եվրոչինովնիկներն էլ իրենց հերթին են հայտարարություններ անում, սակայն դրանցում Հայաստանի հետ որեւէ փաստաթղթի ստորագրման, նախաստորագրման մասին խոսք չկա:**

Տես էջ 2

## Հայաստանի բարձրագույն ղեկավարների աշխատավարձերի չափերը 2014-ի հուլիսի 1-ից

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Քաղծառայողների աշխատավարձերի նոր սանդղակին, որը ուժի մեջ է մտնում եկող տարվա հուլիսից, անդրադարձանք մեր նախորդ հրապարակման մեջ («Ի՞նչ աշխատավարձեր կստանան քաղծառայողները 2014-ի հուլիսի 1-ից», «Ազգ», 4.10.2013 թ.): Միաժամանակ, ներկայացրել էինք այն սանդղակը, որը ցույց էր տալիս, թե գործունեության քանի՞ տարվա ստաժ, ի՞նչ դաս ունեցող եւ ի՞նչ մակարդակներում գտնվող քաղծառայողներից յուրաքանչյուրի աշխատավարձը որքան կկազմի բազային դրույքաչափի նկատմամբ: Կցանկանայինք նախ մեկ ճշտում կատարել այդ հրապարակման առնչությամբ եւ տեղեկացնել, որ աշխատավարձերի նկատմամբ գործակիցները կիրառվելու են ոչ թե 40 հազար դրամի, այլ 66 հազար դրամի նկատմամբ: Այսինքն, տվյալ գործակիցը բազմապատկվելու է նվազագույն աշխատավարձի չափով՝ 66 հազար դրամով եւ ստացվելու է աշխատավարձի չափը՝ չհաշված եկամտային հարկը: Բնականաբար, «մաքուր» աշխատավարձը կլինի այդ գումարից հանած եկամտային հարկի գումարը: Նույն սկզբունքով է սահմանվելու նաեւ երկրի բարձրագույն ղեկավարության աշխատավարձերի չափը դարձյալ 2014-ի հուլիսի 1-ից:**

**Ստորեւ ներկայացնում ենք այն աղյուսակը, որտեղ երեւում է, թե որքան են կազմելու երկրի նախագահի, ԱԺ նախագահի, վարչապետի, այլ բարձրաստիճան պաշտոնյաների, նրանց տեղակալների, խորհրդականների եւ օգնականների աշխատավարձերը: Դրանից երեւում է, որ երկրի նախագահի աշխատավարձը, ներառյալ եկամտային հարկը, կկազմի 1 մլն 320 հազար դրամ՝ 66 հազար դրամը բազմապատկած 20 գործակցով: Եթե ստացվող գումարից հանենք եկամտային հարկը, ապա «մաքուր» աշխատավարձը կգտնվի 800-900 հազար դրամի միջակայքում: Մյուս աշխատավարձերի չափը նույնպես կարելի է ստանալ այս հաշվարկը կատարելով, չմոռանալով այնուհետեւ ստացվող գումարից հանել եկամտային հարկը: Եկամտային հարկի նվազագույն չափը աշխատավարձի 24,6 տոկոսն է, իսկ 120 հազար դրամից ավելի աշխատավարձ ստացողների համար այդ չափն ավելանում է՝ ըստ համապատասխան սանդղակի:**

Տես էջ 3

## Ընթացիկ

# Բժիշկների իրավունքները պաշտպանել օրենքով

Ոչ միայն հիվանդների, այլեւ բուժաշխատողների շահերը պաշտպանության կարիք ունեն: Բժշկի ու բուժհիմնարկի հասցեին թյուր, չճշտված տեղեկատվությունը, անհիմն մեղադրանքները կարող են անտեղի խաղալ բժշկի ու հիվանդանոցի հեղինակության հետ, գցել նրանց վարկանիշը: Մասնագետները կարծում են՝ բուժաշխատողների իրավունքները հարկ է պաշտպանել օրենսդրությամբ:



Երեկ «Անալիտիկ» վերլուծական կենտրոնում կազմակերպված քննարկման ժամանակ կենտրոնի աշխատակիցները հանդես եկան առաջարկությամբ, որպեսզի մշակվի օրենքի նախագիծ, որը նախ եւ առաջ թույլ չի տա բժշկական սխալների, անցանկալի պատահարների դեպքում մինչ փորձաքննության ավարտը հրապարակել բժշկի ու հիվանդանոցի անունը: «Անալիտիկ» կենտրոնում հավաքված մասնագետները՝ այդ թվում բժիշկները, ընդգծեցին անհիմն մեղադրանքները գցում են բժիշկների վարկանիշը:

Մանկական արյունաբան **Գեւորգ Թամամյանը** նշում է՝ ամեն մի բժիշկ կարող է սխալվել. «Սխալվում են անգամ աշխարհի լավագույն բուժհիմնարկներում աշխատող բժիշկները: Անսխալական բժիշկ չկա»:

Ուռուցքաբան **Դավիթ Զոհրաբյանը** մեջբերում է զարգացած երկրների փորձից. այնտեղ բժիշկներն ունեն բժշկական սխալի ապահովագրման իրավունք, եւ գործած սխալների դեպքում կարող են փոխհատուցել՝ համաձայն իրենց ունեցած ապահովագրության:

Քննարկմանը ներկա էր նաեւ փորձագետ Ազգային ժողովից՝ **Մարինե Նալբանդյանը**, որի կարծիքով՝ զանգվածային լրատվամիջոցները օրինագծի մշակմանը դեմ կլինեն: Վերջինս առաջարկեց կազմակերպել ավելի լայն քննարկումներ:

Քննարկման մասնակիցների կողմից միանգամայն տեղին բարձրացվեց նաեւ մամուլում բացասական լուրերի գերակշռելու փաստը: Սպանությունների, գողությունների եւ այլ տեսակի հանցանքների մասին որոշ լրատվամիջոցներ գրում են սիրով եւ ավելի շատ, քան ինչ-որ մի լավ բանի մասին: Իսկ դրա առաջին պատճառն իրենց լրատվամիջոցի վարկանիշը բարձր պահելն է, քանի որ ընթերցողները, դժբախտաբար, իրենց դիտումներով ապահովում են այդ լուրերի պահանջարկը: Սակայն այս դեպքում, հատկապես ինտերնետային մամուլը պետք չէ, որ առաջնորդվի պահանջարկից ծնվում է առաջարկը սկզբունքով: Այս դեպքում լրատվամիջոցն ինքն է պահանջարկ ձեւավորողը:

Բժիշկները դժգոհում են, որ շատ լրատվամիջոցներ սենսացիոն լուրերի հետեւից «ընկնելով»՝ փնովում են բժշկի մասնագիտությունը: Իհարկե, միշտ չէ, որ լրատվամիջոցներն անտեղի ու անհիմն են գրում բժիշկների սխալների մասին: Բժիշկների անփութության բազմաթիվ օրինակներ ունենք ինչպես մարզային, այնպես էլ մայրաքաղաքի կլինիկաներում: Եվ անկախ ամեն ինչից՝ հիվանդի առողջության ու կյանքի հանդեպ անփույթ վերաբերմունքն արդարացնելն անհնար է, ինչպես եւ անհնար է արդարացնել բժշկին ծեծելն ու հայհոյելը:

Երեկ առաջարկ եղավ անգամ բժշկական օմբուդսմեն ունենալու, որն ի պաշտոնե կպաշտպանի բժիշկների շահերը, իրավունքները:

Ի. Պ.

# Ցեղասպանության վերաբերյալ դասընթաց Կոլումբիա համալսարանում

**Մրցանակակիր գրող, Կոլգեյթ համալսարանի «ստեղծագործական գրելաոճ» դասընթացի տնօրեն Պիտեր Բալաքյանը հրավիրվել է այս աշնանը դասավանդելու Կոլումբիա համալսարանի «Միջին Արեւելքի, Հարավային Ասիայի եւ աֆրիկյան ուսումնասիրությունների» բաժնի ուսանողներին, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:**

**«Նացիստները շատ բան սովորեցին հայերի ցեղասպանությունից: Եվրոպայում հրեաների եւ Օսմանյան կայսրությունում հայերի պատմությունները չափազանց հետաքրքրական համեմատությունների առիթ են ստեղծում, որոնք ուսանողների համար կարող են լինել խիստ ուսուցողական: Նրանք բացահայտելու են ցեղասպանության ազդեցությունը մարդկային ինքնության, մտածողության եւ երեւակայության վրա: Ուսումնասիրելու են, թե ինչպես սարսափելի աղետի փորձությունն ունեցող վերապրողները կարողանում են իմաստավորել իրենց կյանքը, անդրադառնալու են էթիկայի, բարոյականության, հանդուրժողականության եւ բազմամշակութային հասարակության խնդիրներին: Այս բոլորը նպաստելու են ուսանողների մտահորիզոնի ընդլայնմանը», նշել է Բալաքյանն այս առիթով, ավելացնելով, որ դասավանդման ընթացքում օգտագործվելու են ինչպես ֆիլմեր, տեսավկայություններ, հիշողություններ, այնպես էլ գրքեր:**

Հ. Ծ.

# Հիմա էլ Ֆյուլեն Հայաստանը չնշեց նախաստորագրողների շարքում

*1-ին էջից*

**Ավելին, գնալով հստակ է նշվում, որ նախաստորագրման պատրաստվող մյուս երկրների հետ արարողությունն իրականացվելու է, ու այդ շարքում Հայաստանը չկա:**

**«Հույս ունենք, որ Վիլնյուսում հնարավոր կլինի տոնել Ասոցացման համաձայնագրի եւ Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման համաձայնագրի (ԱՀ/ԽՀԱԱԳ) ստորագրումը Ուկրաինայի հետ, ԱՀ/ԽՀԱԱԳ նախաստորագրումը Մոլդովայի եւ Վրաստանի հետ, շարժունակության օրակարգի լավ առաջընթացը, ներառյալ՝ վիզաների դյուրացման եւ ռեադմիսիայի համաձայնագրերի կնքումը Հայաստանի ու Ադրբեջանի հետ, համագործակցության շոշափելի արդյունքները տարբեր սեկտորներում, հատկապես տրանսպորտի եւ կրթության», երեկ Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում տեղի ունեցած Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի հերթական հանդիպմանը հայտարարել է ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն:**

**Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ առաջին անգամ գործընկեր երկրում անցկացվող հանդիպմանը Ֆյուլեն ընդգծել է, որ Եվրամիությունը հաստատակամ է շարունակելու համաձայնեցված օրակարգը, սակայն նաեւ հրամայական է, որ Արեւելյան գործընկերների կառավարությունները քաղաքական կամք դրսեւորեն եւ իրականացնեն բարեփոխումները:**

**Տեսնենք, թե մնացյալ ամիսուկես ժամանակահատվածում ինչ զարգացումներ կլինեն, քանի որ ինչպես եվրոպական, այնպես էլ հայկական կողմից նշվում է, թե բանակցում են, իսկ թե ինչ՝ չի հայտարարվում:**

Վ. Պ.

***ԻՆՉՈ՞Ւ ԱՅԴՔԱՆ ՍՏՈՐ, ԱՅԴՔԱՆ ԴԱՎԱԴԻՐ***

# «Մասյան գնդի» տիկնոջ արարքից վրդոված

**Ես Սաթիկը չեմ սիրեր, ըմմա Սաթիկը չսիրողը դիհա չեմ սիրեր, ասում էր մեծ մայրս, եւ մենք ծիծաղում էինք առանց իմանալու, որ այդ դարձվածքին անդրադառնալու եմ 70 տարի հետո:**

**Րաֆֆի, բարեկամս, եղբայր իմ պատվական, դու լավ գիտես, չէ՞, որ «ես քեզ ճանաչում եմ» ասելը քիչ է: Քանի տարի է անցել, երբ դեռ պատանի էիր եւ ժամանեցիր Երեւան, աճեցիր, աճեցիր դարձար նախագահի թեկնածու. ճշմարտախոս ես, արդարամիտ, փայլուն ճառախոս, հայրենասեր, անձնազոհ, հետաքրքիր տղամարդ, լեզուներ գիտես, լավ հայր ես, լավ ամուսին, լավ ընկեր, լավ քաղաքացի (կարող եմ շարունակել, սակայն ինքնասիրությունդ չվիրավորեմ, կասեր Վահե-Վահյանը), բայց ոչ դիվանագետ:**

**Ասա, խնդրեմ, աշխարհաճանաչ հայի զավակ, Ստրասբուրգում «մասյան գնդի» անդամ կնոջ հարցը նախագահին կարո՞ղ էր առանց կուսակցության գիտության լինել: Թե՛ դրական, թե՛ բացասական՝ պատասխանդ ոչինչ է փոխելու, քանզի այդ արարքը մեր հզոր լեզվում անուն չունի:**

**Թողնենք Սերժին: Նա խաղամոլ է, կնամոլ է, գինեմոլ է, «դալմագարդենմոլ» է, բնավ կարեւոր չէ: Կարեւորը հաջորդ հարցիս պատասխանն է: Չէ՞ր կարող «մասյան գնդի» առաջատարը չարաբաստիկ (սա հարցի բնորոշ բառ է, ոչ՝ արարքի) ասելիքը հնչեցներ Երեւանում կամ մեկ այլ պետությունում՝ Ղարաբաղում: Ինչո՞ւ հենց օտարի մոտ, ինչո՞ւ այդքան դավադիր, այդքան ստոր: Եթե հաշվարկն այն էր, որ դրանով հանրապետությունում անպատժելիության մթնոլորտը կփոխվի, ոզնին չի հավատա, արտագաղթը կկանգնի, ոզնու տղան չի հավատա, սփյուռքահային պաշտպանության նախարարության մեղավ (այդ թվում նաեւ Թուրքիայի քաղաքացու) փաստը կայդանվի, ոզնու թոռը չի հավատա: Եվ այսպես, ոզնի, ոզնի մինչեւ վերջ: Ստրասբուրգը կփոխի՞ ...**

**Ես դիմում եմ Ձեզ, պարոն նախագահ (Դուք լավն եք, թե վատը, դա այլ հարց է), եթե մեր պատմության մեջ, ցավոք, ծանոթ դավաճանության փաստը եւս ներվի, ինչպես շատ այլ արարքներ, ապա դա կխոսի ոչ միայն Ձեր, այլեւ ողջ ազգի որակի մասին:**

**Դուք հասկանո՞ւմ եք, որ Դուք ազգի սիմվոլն եք: Սիմվոլը՝ Մարտիրոս Սարյանի կողմից է գծված. կամ առյուծ ու վագր է պատկերում, միեւնույն է, ժողովուրդը պարտավոր է հարգել:**

**Չգիտեմ, որ միլիոներորդ մասով այդ սիմվոլը նաեւ իմն է, եւ ինձ պատկանող մասով ես պատիվ եմ պահանջում, ես վրդովված եմ, զայրացած:**

**Աշխարհը գիտե, որ իմ ողջ ազգն ու տակը եւ ես Հայաստանում ենք, եւ եթե «մասյան գնդի» տիկինն այս երկրում ապրի, ես էլի չեմ փախչի, բայց, հավատացեք, փախչողին չեմ մեղադրի:**

ՌՈՒԲԵՆ ԿՈԶՄՈՅԱՆ

# Լոլիկներով եւ ձվերով

*1-ին էջից*

Իսկ եթե ձեռքերը քոր են գալիս ու Լֆիկ Սամոն էլ իր խանութից ձրի լոլիկ ու ձու է տալիս՝ ուզում են անպայման ցույց անել ու լոլիկ շպրտել, քանի որ արդեն ազատի մեջ են, մատնացույց ենք անում ավելի արժանի հասցե. թող օդանավակայանի փոխարեն գնան Արմավիրի մարզ, գտնեն էն քննիչին, որն իր ամբիցիաների, կամ ինչ գիտեմ՝ այլ շարժառիթների խաթրու 30 կապ ծխահարված խոտի համար, այն էլ առանց ապացուցողական հիմքի, փաստորեն պատժում է մի լույս երիտասարդի, «Լույս» հիմնադրամի շրջանակում Քեմբրիջում կրթված Արամ Մուղալյանին եւ նրա երեք ընկերներին: Պատժում է՝ հինգ ամիս խափանման միջոց կալանքի միջոցով քրեակատարողական հիմնարկում պահելու միջոցով եւ փաստորեն ՀՀԿ-ի պաշտպանած գլխավոր դատախազ Գեւորգ Կոստանյանի խոսքը գետին գցելով, որ ասում էր, թե կալանքը որպես խափանման միջոց կիրառելը անթույլատրելի է հաճախ ու դրանից առավելագույնս պետք է հրաժարվել: Էս քննիչը, ուրեմն, շատ է երեւի կատաղել, որ Արամ Մուղալյանը չի ուզում տեղավորվել իր սարքած գործի մեջ ու իր իրավունքներն է պաշտպանում, ինչպես Քեմբրիջում են սովորեցրել, ուրեմն իր վրեժխնդրական բնազդներն է բավարարում (քննիչը)՝ այդպիսով ոտքի տակ տրորում է բոլոր ՀՀԿ-ականներին, Գեւորգ Կոստանյանին, երկրի նախագահին, քանի որ նրանց ասած իրավական բարեփոխումների ոլորտից դուրս է մնացել: Առեք լոլիկներն ու գնացեք էդ քննիչի մոտ, մի երկու հատ որ շպրտեք՝ չապացուցված մեղքի համար պատժվող երիտասարդին պաշտպանելով, քննիչը տեղը կբերի օրենքը, ու երկրի ղեկավարությանը չի վարկաբեկի, Արամ Մուղալյանն էլ հացադուլից ու ջրադուլից դուրս կգա, մենք էլ կիմանանք՝ իրավական երկրում ենք ապրում: Այդպես ավելի շատ օգուտ տված կլինեք երկրի նախագահին ու գաղջ մթնոլորտն էլ մասամբ կցրեք: Թե չէ՝ օդանավակայա՞ն, Զարուհի՞, աչք մտնելու հեշտ ձեւ եք, էլի, գտել...

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Երբ մշակութային աշխատանքն ու գրահրատարակումը զուգորդվում են

Ռուսաստանում է ապրում Հայաստանից դուրս հաստատված ամենամեծ հայկական համայնքը, որը, սակայն, մեծավոր արտադրանքով չի արդարացնում սպասելիքները: Այդուհանդերձ կան բարի կամքի մարդիկ, ովքեր առանց աղմկելու ապրեցնում են հայկական գիրքը: **Սամվել Ղազարյանը** մեկն է մշակույթի անխոնջ մարտիկներից:

«Ноев ковчег» ամսաթերթի խմբագրատանը, հարմարավետ բազկաթոռին նստած, Սամվել Ղազարյանը մտասույզ ծխում է: Նա խոսում է խռպոտ ձայնով եւ ընտիր հայերենով: Ես տեղեկանում եմ, որ նա Երեւանից Մոսկվա է տարագրվել «մութ» 1990-ականներին, երբ բացել է ճարտարապետական արվեստանոց: Մոսկվայում (եւ առհասարակ Ռուսաստանում) հայկական գրքերի պակասը գիտակցելով՝ նա ձեռնամուխ է եղել հրատարակչական գործին: «2005-ին ես ստեղծեցի իմ Uni Press հրատարակչությունը՝ հիմք ընդունելով իմ Uni Prom ճարտարապետական արվեստանոցը: Մեր հրատարակած առաջին գիրքը իտալացի գրող Ջովանի Գուայտայի ստեղծագործությունն է Հայոց ցեղասպանության մասին», պատմում է Սամվել Ղազարյանը:

Նա չբավարարվեց հայոց պատմության այդ մռայլ էջով: Ունի որոշակի նպատակ. հայ գրականության մեծ դասականներին հնարավորինս շատ ճանաչելի դարձնել ռուսալեզու (հայ կամ այլազգի) հանրությանը: Ղազարյանի անձնական ներդրման շնորհիվ լույս ընծայվեցին թարգմանություններ: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, Րաֆֆիին («Սամվել», «Դավիթ-Բեկ», «Խենթը»), ինչպես նաեւ Մուրացանին («Գեւորգ Մարզպետունի»), Դերենիկ Դեմիրճյանին, չխոսելով արդեն հին ու նոր, կրոնական եւ աշխարհիկ պոեզիայի (Նահապետ Քուչակ, Գրիգոր Նարեկացի, Պարույր Սեւակ, Հովհաննես Շիրազ), ինչպես նաեւ Թումանյանի հեքիաթների մասին: Դժվարին պայմաններում լույս տեսավ ընդհանուր առմամբ չորս տասնյակ աշխատություն: Այսօր նրա շնորհիվ հնարավոր է ռուսաց լեզվով հայկական կամ Հայաստանին վերաբերող գրքեր գտնել Մոսկվայի, ինչպես նաեւ Երեւանի գրախանութներում:

Հրատարակչի գլխավոր հոգսերից մեկը գրքերի տարածումն է: Գրահրատարակչության ֆինանսական անդունդում շահավետ գործարքների մասին չմտածող Ղազարյանը մխիթարվում է՝ մտածելով նախկին ԽՍՀՄ տարածքի բազմաթիվ հայկական ամենօրյա եւ կիրակնօրյա դպրոցների հազարավոր աշակերտների մասին:



«Մենք Ռուսաստանում ունենք բազմաթիվ տաղանդներ, որոնք ստեղծագործական մեծ ներուժ են կազմում, բայց մինչեւ օրս մենք չենք կարողացել միավորվել մի ընդհանուր նախագծի շուրջը», գանգատվում է Ղազարյանը: «Զարմացած եմ հավատարիմ եւ շատ ուսյալ ռուս ընթերցողների զանգվածի գոյությունից, որոնք մոտիկից հետաքրքրվում են մեր գրականությամբ: Սովորաբար տարեց մարդիկ են գալիս ինձ տեսնելու եւ այս կամ այն թեմայի շուրջը բանավիճելու», պատմում է նա ծխելով: Ինչ վերաբերում է հայերին՝ նրանք տարբեր են: «Մոսկվայում կգտնեք Բաքվի հայերի (ռուսալեզու), Աբխազիայի, Օսիայի, Կրասնոդարի, Ռոստովի, Ստավրոպոլի (հայախոս) հայերի. նրանք իրարից տարբեր են, եզակի եւ յուրօրինակ», շարունակում է Սամվել Ղազարյանը:

Օրինակ, Աբխազիայում կան 36 հայկական ամենօրյա դպրոցներ, որոնցից յուրաքանչյուրը անվճար ստանում է հրատարակված բոլոր գրքերից մեկական օրինակ: Նույնը կարելի է ասել Մինսկի, Օդեսայի, Կիեւի կամ Կալինինգրադի հայկական մյուս կառույցների մասին: «Խնդիրը տնտեսականից ավելի շատ բարոյական է: Հարկավոր է ձեւավորել սեփական ժառանգությանը քաջածանոթ երիտասարդ սերունդ: Եթե Ռուսաստանի հայերի գոնե 1 տոկոսը կարդար իմ հրատարակած գրքերը, ես երջանիկ կլինեի: Ցավոք, այդ թիվն էլ չենք ապահովում», ասում է նա:

Այս խնդիրը ծանոթ է նաեւ ֆրանսահայերին:

**ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆ**
**«France-Arménie», septembre 2013**
**Ֆրանս. թարգմ. Պ. Ք.**

# Քաղաքային իշխանությունների երկա՞կի ստանդարտներ

**Նալբանդյան փողոցի թիվ 51 շենքի բնակիչները սեպտեմբերի 1-ին դիմել էին քաղաքապետին հետեւյալ հարցով.**

**«Տեսնելով Ձեր ջանքերը քաղաքի բակերի բարեկարգման հարցում, Ձեր ուշադրությանն ենք հրավիրում այն անտանելի վիճակին, որ տիրում է մեր՝ Նալբանդյան փողոցի թիվ 51 շենքի բակում: Բակը շաբաթվա 6 օրերի ընթացքում վերածված է ոստիկանության աշխատակիցների անձնական ավտոմեքենաների կայանատեղիի, նրանք կանգնում են ամեն հնարավոր եւ անհնարին տեղերում՝ անգամ մայթերի վրա: Հաճախ բնակիչները չեն կարողանում անգամ մոտենալ շենքի մուտքին, էլ չենք ասում երեխաների խաղատարածքի եւ տարրական անվտանգության մասին»:**

**Որպես հնարավոր լուծում բնակիչները առաջարկել էին ուղեփակի (շլագբաում) տեղադրում՝ բակ մտնելու համար, ինչպես դա արված է շրջակա գրեթե բոլոր բակերում:**

**Մերժողական պատասխանը, ստացված Կենտրոն թաղապետարանից (10.09.2013), ապշեցուցիչ է, մի կողմից՝ խնդիրը չլուծելու ակնհայտ միտումով, մյուս կողմից՝ երկակի ստանդարտների կիրառմամբ, ինչը ոմանց կարելի է եւ չի կարելի մյուսներին: Ըստ պատասխանի՝ արտակարգ իրավիճակների նախարարությունը դեմ է բակերում ուղեփակերի տեղադրմանը: Նախ՝ այլ բակեր վաղուց ունեն ուղեփակեր, եւ անգամ այդ դեպքում համապատասխան գերատեսչությունները, իհարկե, կունենան արգելանքների բանալիները (կոդերը), ինչպես դա արվում է այլ երկրներում: Ավելին, այսօր հենց այդ շենքի բակում խճողված մեքենաներն են արգելում անգամ բնակիչների հետիոտն մոտենալը շենքին, ուր մնաց, թե հրշեջ մեքենայի:**

**Եվ ամենակարեւորը՝ պատասխանում որեւէ այլ լուծում չի առաջարկված բակը ոստիկանների անձնական ավտոմեքենաների հեղեղից ազատելու մասին: Բնակիչները չեն ստացել պատասխան ոստիկանապետից, ում ուղարկված էր նամակի պատճենը:**

**Ստացվում է, մի կողմից իշխանությունները բարեկարգում են բակեր, մյուս կողմից՝ անտեսում քաղաքի կենտրոնում տիրող անտանելի վիճակը:**

**Ակնկալում ենք քաղաքապետարանի եւ ոստիկանության պատասխանները:**



# ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

*1-ին էջից*

| Պաշտոնի անվանումը | Գործակից |
|---|---|
| 1. | 2. |
| ՀՀ նախագահ | 20.00 |
| ՀՀ Ազգային ժողովի նախագահ | 18.00 |
| ՀՀ վարչապետ | 18.00 |
| ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ | 16.00 |
| ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար | 15.50 |
| ՀՀ փոխվարչապետ | 15.00 |
| ՀՀ գլխավոր դատախազ | 15.00 |
| ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ | 15.00 |
| ՀՀ վերահսկիչ պալատի նախագահ | 15.00 |
| ՀՀ մարդու իրավունքների պաշտպան | 15.00 |
| ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ | 14.00 |
| ՀՀ վճռաբեկ դատարանի պալատի նախագահ | 13.50 |
| ՀՀ Վերաքննիչ դատարանի նախագահ | 13.50 |
| ՀՀ Մասնագիտացված դատարանի նախագահ | 13.00 |
| ՀՀ Ընդհանուր իրավասության դատարանի նախագահ | 12.50 |
| ՀՀ նախարար | 12.00 |
| ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ | 12.00 |
| ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար | 12.00 |
| ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար | 12.00 |
| ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն | 12.00 |
| ՀՀ ոստիկանության պետ | 12.00 |
| ՀՀ Սահմանադրական դատարանի անդամներ | 12.00 |
| ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր | 12.00 |
| ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ | 12.00 |
| ՀՀ Վերաքննիչ դատարանի դատավոր | 11.50 |
| ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ | 11.00 |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ | 11.00 |
| ՀՀ Մասնագիտացված դատարանի դատավոր | 10.50 |
| Երեւան քաղաքի դատախազ | 10.00 |
| ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր | 10.00 |
| ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար | 10.00 |
| ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար | 10.00 |
| Ընդհանուր իրավասության դատարանի դատավոր | 10.00 |
| Օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների) ղեկավարներ | 10.00 |
| ՀՀ մարզպետ | 10.00 |
| ՀՀ վերահսկիչ պալատի նախագահի տեղակալ | 10.00 |
| ՀՀ նախարարի առաջին տեղակալ | 10.00 |
| ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ | 10.00 |
| ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ | 10.00 |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավար | 10.00 |
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ | 9.50 |
| ՀՀ նախարարի տեղակալ | 8.50 |
| ՀՀ ոստիկանության պետի տեղակալ | 8.50 |
| ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ | 8.50 |
| Մարզի դատախազ, կայազորների զինվորական դատախազ | 8.00 |
| ՀՀ մարզպետի տեղակալ | 8.00 |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարի 1-ին տեղակալ | 8.00 |
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ | 8.00 |
| Օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (խորհուրդների, հանձնաժողովների, ծառայությունների) ղեկավարների տեղակալներ | 8.00 |
| ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար | 8.00 |
| ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի անդամ | 8.00 |
| Օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների) անդամներ | 7.00 |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարի տեղակալ | 7.00 |
| ՀՀ նախագահի աշխատակազմ | |
| ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական | 11.00 |
| ՀՀ նախագահի խորհրդական | 10.50 |
| ՀՀ նախագահի խորհրդական՝ գլխավոր ռազմական տեսուչ | 10.50 |
| ՀՀ նախագահի խորհրդական՝ հատուկ հանձնարարություններով դեսպան | 10.50 |
| ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար | 10.50 |
| ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ | 10.00 |
| ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի հայեցողական տեղակալ | 9.50 |
| ՀՀ նախագահի օգնական | 9.00 |
| ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ | 9.00 |
| ՀՀ ԱԺ նախագահի գլխավոր խորհրդական | 10.00 |
| ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական | 9.50 |
| ՀՀ ԱԺ նախագահի օգնական | 8.00 |
| ՀՀ կառավարության աշխատակազմ | |
| ՀՀ վարչապետի խորհրդական | 9.50 |
| ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության պետ | 9.50 |
| ՀՀ վարչապետի ավագ օգնական | 8.50 |
| ՀՀ վարչապետի օգնական | 8.00 |

## Միջբուհական կապեր

# Երեւանի պետական համալսարանի համագործակցության շրջանակներն ընդլայնվում են





Սեպտեմբերի 18-ից 22-ը ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն ու Միջազգային համագործակցության վարչության պետ Ալեքսանդր Մարգարովը «SGI» (Soka Gakkai International) հիմնադրամի նախագահի Դաիսակու Իկեդային ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու եւ Սոկա համալսարանի հետ համագործակցության պայմանագիր կնքելու նպատակով մեկնել էին Ճապոնիա:

Այցի ընթացքում ԵՊՀ պատվիրակությունը հանդիպել է Ճապոնիայի Սոկա համալսարանի ղեկավարության եւ ուսանողության հետ, ինչպես նաեւ այցելել «SGI» հիմնադրամի մշակութային կենտրոններ եւ միջնակարգ դպրոց:

ԵՊՀ-ի համագործակցությունը ճապոնական Սոկա համալսարանի հետ սերտացավ, երբ դեռեւս 2012թ հունիսին ՀՀ նախագահի, ԵՊՀ խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը Ճապոնիա կատարած պաշտոնական այցի ընթացքում այցելել էր նաեւ Տոկիոյի Սոկա համալսարան, որտեղ Սերժ Սարգսյանին շնորհվել էր համալսարանի պատվավոր դոկտորի կոչում՝ նախագահին հանձնելով ոսկե մեդալը:

«SGI» հիմնադրամը մասնաճյուղեր ունի ամբողջ աշխարհում: Ներառում է թանգարաններ, մշակութային կենտրոններ, բարձրագույն եւ միջնակարգ կրթական հաստատություններ: Խաղաղության, հանդուրժողականության եւ մարդասիրության գաղափարները տարածող միության հիմնադիրն է մտավորական Դաիսակու Իկեդան:

Հայկական պատվիրակությանը մեծ շուքով են դիմավորել օդանավակայանում. շուրջ 50 մարդ հայկական պետական խորհրդանիշները պատկերող պաստառներով ողջունել են համալսարանականներին եւ ընթերցել Դաիսակու Իկեդայի ուղերձը:

Հայկական պատվիրակությունն այցելել է հիմնադրամի մշակութային կենտրոն-թանգարան, որտեղ կան տարբեր ազգերի մշակույթները ներկայացնող 200-ից ավելի երաժշտական գործիքներ՝ դաշնամուրներ, երգեհոններ եւ այլն: Ի դեպ, այցելուները կարող են նվագել այդ գործիքները: Թանգարանում մի առանձին ցուցապատ էլ նվիրված է «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբին. ներկայացված են փոքրիկ երգիչների՝ Ճապոնիայում ունեցած ելույթները: Ընդ որում՝ ցուցասրահում առկա մատյանում այցելուները կարող են նաեւ իրենց տպավորությունների մասին գրել:

ԵՊՀ ռեկտորը Սոկա համալսարանում հանդիպել է բուհի ղեկավարության հետ: Հայկական պատվիրակությանը համալսարանի ուսանողները դիմավորել են «Էրեբունի-Երեւան» երգով, ինչը մեծ տպավորություն է գործել պատվիրակության անդամների վրա:

Արամ Սիմոնյանը եւ Սոկա համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Յոշիհիսա Բաբան ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, ըստ որի՝ երկկողմ համագործակցության շրջանակում կողմերն իրականացնելու են մասնավորապես պրոֆեսորադասախոսական անձնակազմի, աշխատակիցների եւ ուսանողների, համատեղ հետազոտությունների եւ ակադեմիական տեղեկատվության ու հրատարակությունների փոխանակում, խորհրդատվություն եւ այլ գործունեություն, ինչը կնպաստի 2 բուհերի զարգացմանը:

Արամ Սիմոնյանը Սոկա համալսարանի ռեկտորի կողմից արժանացել է բուհի բարձրագույն մեդալի, իսկ համալսարանի ուսանողական միավորման ներկայացուցիչ Սինձի Յամազակին բարեկամության պատվոգիր է հանձնել ԵՊՀ ռեկտորին: «Գիտենք, որ Ձեր համալսարանում ոչ միայն որակյալ մասնագետներ են պատրաստվում, այլեւ հիանալի սերունդ դաստիարակվում: Եվ դա արվում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, մասնավորապես Ձեր տքնաջան աշխատանքի շնորհիվ: Աշխատանք, որը հիմնված է գիտական եւ կրթական սերտ համագործակցության, ինչպես նաեւ փոխանակման արդյունավետ ծրագրերի վրա: Երկու համալսարանների հետագա սերտ համագործակցությունը հաստատելու համար մեր համալսարանի ղեկավարության եւ ուսանողների անունից պատիվ ունենք հանձնելու այս պատվոգիրը»,- նշել է Սինձի Յամազակին:

Այնուհետեւ հանդիսությունների դահլիճում, որտեղ ներկա է գտնվել ավելի քան 5 հազար մարդ (հիմնականում Սոկա համալսարանի շրջանավարտներ), Արամ Սիմոնյանը խաղաղասիրական անձնվեր գործունեության, մարդասիրական արժեքների տարածման եւ արմատավորման գործում ձեռք բերած ակնառու նվաճումների համար Դաիսակու Իկեդայի դիպլոմը, ԵՊՀ ոսկե մեդալն ու պատվավոր դոկտորի վկայականը հանձնել է Յոշիհիսա Բաբային: «Ինձ համար մեծ պատիվ է այսօր ձեր համալսարանում գտնվելը: Շնորհակալ եմ «SGI» միությանը հրավերի համար: Մեր համալսարանների միջեւ համագործակցությունը նոր է սկսվել, սակայն վստահությամբ կարող եմ ասել, որ սա միայն առաջին քայլն է նոր համամարդկային արժեքներ ստեղծելու գործում: Մեզ համախմբում է կրթության եւ մշակույթի միջոցով մարդկության զարգացման եւ բարգավաճման գաղափարը»,- նշել է ԵՊՀ ռեկտորը:

### Դաիսակու Իկեդա

Դաիսակու Իկեդան ծնվել է 1928-ին Տոկիոյում: Նա մանկավարժ է, փիլիսոփա, բեղմնավոր հեղինակ եւ մեծ մարդասեր: Մեծ ներդրում ունի համաշխարհային մարդասիրական կրթության, միջմշակութային երկխոսության եւ խաղաղության քարոզման գործընթացում: Նրա հիմնադրած «SGI» (Soka Gakkai International) կառույցը հիմնված է հումանիստական, խաղաղ կյանքն ապահովող հասարակության կառուցման վրա: Այսօր արդեն հիմնադրամն ամբողջ աշխարհում ունի ավելի քան 12.5 մլն անդամ: Իկեդան իր սկզբունքները քարոզող մանկապարտեզներ է հիմնադրել Մալայզիայում, Սինգապուրում, Հոնկոնգում եւ Կորեայում, ինչպես նաեւ տարրական դպրոցներ ու «JUNIOR HIGH SCHOOL» հիմնել Բրազիլիայում: Նա նաեւ հիմնադիրն է մի շարք միջազգային շահույթ չհետապնդող խաղաղության եւ մշակութային հաստատությունների: Կրթության, մշակույթի եւ խաղաղության տարածման գործում իր ներդրած ավանդի համար Դաիսակու Իկեդային շնորհվել է 300 պատվավոր դոկտորի կոչում աշխարհի տարբեր բուհերի կողմից: Նա արժանացել է նաեւ ՄԱԿ-ի «Խաղաղության մեդալ»-ի, «Simon Wiesenthal Center»-ի հանդուրժողականության մրցանակի, «ROSA PARKS» մարդասիրական մրցանակի եւ այլն:

### Սոկա համալսարան

*Սոկա համալսարանը հիմնադրվել է 1971-ին Տոկիոյում: Համալսարանի կրթության հիմքում մշակույթն է եւ կենսական հողը, որն էլ յուրաքանչյուր նոր սերնդի ակունքն է: Բուհի գաղափարախոսության համաձայն՝ համալսարանը մի վայր է, որտեղ պետք է ծնվեն մարդասիրական կրթական սկզբունքներով ձեւավորված անհատներ: Մանկավարժական կազմը խթանում է ուսանողի ստեղծագործական, գիտական ձգտումները՝ պատրաստելով իմաստուն, մարդասիրության, հարգանքի ու բարոյական արժեքների վրա հիմնված ուժեղ անհատներ: Սոկա համալսարանի հիմնարար սկզբունքներն են՝ ստեղծել մարդասիրական կրթություն, լինել նոր մշակույթի բնօրրան եւ խաղաղության ամրոց մարդկության համար:*

*ԵՊՀ լրատվական գրասենյակ*

# «Լեզվի ոստիկանության» վրացական տարբերակն անհանգստացնում է ջավախքցիներին

**Վրաստանի Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը հայտարարություն է տարածել, որում դիմում է Վրաստանի կառավարությանը, որպեսզի վերջինս զերծ մնա երկակի ստանդարտների կիրառումից եւ շուտափույթ կերպով ձեռնամուխ լինի տարածաշրջանում հայերենին տարածաշրջանային կարգավիճակ շնորհելուն:**

**«Հարավային դարպաս» կայքէջի տեղեկացմամբ՝ սեպտեմբերի վերջին Վրաստանի ակադեմիական շրջանակները խորհրդարան օրենսդրական նախաձեռնություն են ներկայացրել, որը վերաբերում է Վրաստանի պետական լեզվի չափանիշների խախտման դեպքում տուգանքների կիրառմանը: Որ Վրաստանում որոշ ազգայնամոլներ այդպիսի մտադրություն կարող էին ունենալ, անգամ ցանկություն, հաստատ ժխտելի հանգամանք չէ, սակայն օրենսդրական մակարդակով հարցին մոտեցումն արդեն այդ երկրում այլատյացության մասին ուրիշ որակումների տեղիք է տալիս:**

**Ըստ աղբյուրի՝ այդ նախագիծը վրաց խորհրդարանի կրթության, գիտության եւ մշակույթի հանձնաժողովում է: Դրանով նախատեսվում է, որ պետք է հիմնվի պետական բյուջեով ֆինանսավորվող մարմին, որը վերահսկելու է պետական լեզվի պաշտպանությունը: Պետական մարմինը վերահսկելու է պաշտոնական փաստաթղթերը, գովազդերը, լրատվամիջոցների կողմից ներկայացվող տեղեկատվությունը եւ խախտումների բացահայտման դեպքում սահմանելու է պատժամիջոցներ:**

**Խորհրդի հայտարարությունում ասվում է, որ նման նախաձեռնությունն առաջինը չէ: Այս գործընթացն իր դրսեւորումներն էր ունեցել նաեւ 2012 թ., երբ ներկայիս վարչապետ Բիձինա Իվանիշվիլու թիմակիցները հայտարարեցին այսպես կոչված «լեզվի ոստիկանության» ստեղծման մասին:**

**Հայտարարությունում ասված է, որ կառավարության ներկայիս քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների վերաբերյալ միայն բարդացնում է ջավախահայության վիճակը: «Ելնելով այն հանգամանքից, որ Վրաստանի ամբողջական տարածաշրջաններ բնակեցված են ոչ վրացական ազգություններով, իսկ վրացական իշխանությունները մինչ օրս չեն ստորագրել կամ վավերացրել բնիկ ժողովուրդների եւ ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերը, դրանց միանալու դեպքում էլ՝ երկրում չեն մշակվել եւ կիրառության մեջ դրվել համապատասխան օրենքները, վերոնշյալ ողջ գործընթացն իր անմիջական ազդեցությունն է գործելու Վրաստանի կազմում գտնվող մի շարք տարածաշրջանների վրա», ասվում է հայտարարությամբ:**

**Նույն փաստաթղթով մտավախություն է արտահայտվում, որ միջազգային պարտավորությունների չկատարման, օրենսդրական այսպիսի բացի պայմաններում վրացական իշխանությունների այս քայլերը նշյալ հայահոծ տարածաշրջաններում տեղի են տալու նոր հուզումների, «կրկին մեծանալու է վրացական իշխանությունների հանդեպ անվստահությունը, խորանալու է ջավախահայության մեկուսացումը պետական ինստիտուտներից»:**

**Այս ամենից խուսափելու համար Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը պահանջ է ներկայացրել վրացական իշխանություններին, որ վերջիններս զերծ մնան իրենց ծրագրերի հանդեպ երկակի ստանդարտների կիրառումից եւ նման գործընթացներ սկսելու շրջանակներում շուտափույթ ձեռնամուխ լինեն խնդրո առարկա տարածաշրջանում հայերենին տարածաշրջանային կարգավիճակ շնորհելուն:**

**Վ. Պ.**

# Լանս Փրայս. «Բրիտանիայում հարգված մասնագիտությունների շարքում լրագրությունը վերջին հորիզոնականում է»

Բրիտանական դեսպանատան հրավերով, Հայաստանում Բրիտանիայի օրեր ծրագրի շրջանակում, Երեւանում է Լանս Փրայսը, որը անգլիական Լեյբորիստական կուսակցության հաղորդակցության բաժնի ղեկավար է եղել 2000-2001թթ., ինչպես նաեւ վարչապետ Թոնի Բլերի մամլո խոսնակը 1998-2000թթ:

Լանս Փրայսը նաեւ գրող է, հայտնի լրագրող եւ քաղաքական մեկնաբան: Աշխատել է The Guardian, Daily Telegraph, The Times, Independent Evening Standard, New Statesman, Today Programme, Newsnights, Panorama, Question Time, Channel Four News, BBC լրատվամիջոցներում:

Հինգշաբթի օրը, Լանս Փրայսը ունկնդիրներին ներկայացրեց իր աշխատանքային փորձը, ինչպես նաեւ վերլուծեց 30 տարիների ընթացքում բրիտանական մամուլի զարգացման կարեւոր դրվագները:

Լանս Փրայսն ուրախությամբ նշում է, որ մեդիան այսօր բաց է՝ եւ հետաքրքրական է աշխատել լրատվամիջոցներում: Զնայած այսօր Twitter-ն է դարձել լուրեր հաղորդելու, տարածելու ամենաարդյունավետ միջոցը:

Հիշելով BBC աշխատանքային տարիները՝ նա ասաց. «Երբ BBC-ում Հայոց ցեղասպանության մասին նյութ էի պատրաստում, թուրքերն այդ ժամանակ ակտիվացան ու ասում էին, որ ապատեղեկատվություն եմ տարածում: Ինձնից օրեր պահանջվեցին ղեկավարներիս համոզելու, որ կողմնակալ տեղեկատվություն չեմ հաղորդել, այլ՝ իրական»:

Հիշելով վարչապետ Թոնի Բլերի հետ իր աշխատանքային համագործակցությունը՝ լրագրողը նշեց. «Թ. Բլերը շատ էր կարեւորում ԶԼՄ-ներին եւ մեծ ուշադրություն էր դարձնում ինչպես լրագրողներին, այնպես էլ լրատվամիջոցներին: Ըստ Բլերի՝ մեդիան իրականում վայրենի գազան է, որը փորձում է մարդկանց անունը փչացնել: Թոնի Բլերը, լինելով ամենաազդեցիկ մարդկանցից մեկը, լրատվամիջոցների զոհն էր»:

Լանս Փրայսը ուրախությամբ նշեց, որ Թոնի Բլերի ղեկավարման օրոք կառավարությունում ավելի շատ կանայք էին աշխատում, քան այժմ: Անդրադառնալով թերթերին, ցավով էլի նույն միտումը նկատեց, որ կանայք թերթերում ավելի քիչ են այսօր, քան, օրինակ, 90-ական թվականներին: Սակայն դա այժմ միայն թերթերին չի վերաբերում, այլեւ՝ կառավարման մարմիններին նաեւ:

Բանախոսը նշեց նաեւ, որ Բրիտանիայում հարգված մասնագիտությունների շարքում լրագրությունը չի մտնում եւ այն վերջին հորիզոնականներում է:

Լրագրողի կարծիքով՝ տեխնիկական հեղափոխությունը ստիպեց, որ լրատվամիջոցներն ավելի բաց լինեն:

Անդրադառնալով հանրության նախընտրությանը՝ Լանս Փրայսը նշեց, որ 2006թ. սկսած 50 տոկոսից ավելին Բրիտանիայում կարդում է թերթ, իսկ երիտասարդների միայն 30 տոկոսն է նայում հեռուստացույց. «Իրադարձությունների զարգացմանը, լուրերին մարդիկ հետեւում են կայքերի, ֆեյսբուքյան էջերի միջոցով: Հեռուստատեսությունն ու ռադիոն իրենց դիրքերը զիջում են: Ահա թե ինչու բուռն իրադարձությունների զարգացման ընթացքում Չինաստանում եւ Իրանում ինտերնետը արգելափակվում է: Բայց դա չի նշանակում, որ մարդիկ լուրջ լրատվություն չեն ցանկանում ստանալ, նրանք կայքերում տեղադրված լուրերն անվանում են «աղմուկ», եւ երեկոյան յուրաքանչյուրը ցանկանում է դիտել հեռուստացույց՝ հասկանալու իրողությունը»:

Լանս Փրայսի կարծիքով՝ լրագրությունն ավելի շատ երկխոսություն է, քան՝ դասախոսություն:

Լանսը մամուլի քարտուղարներին, որոնք հաճախ ստում են, խորհուրդ տվեց. «Երբեք մի խաբեք: Օրինակ՝ միակ սուտը, որն ասել եմ մամուլի խոսնակ եղած ժամանակ, այն է, որ երբ լրագրողները հետաքրքրվեցին՝ արդյոք վիճե՞լ են ֆինանսների նախարարն ու վարչապետը, ասացի՝ չգիտեմ: Ես մամուլի քարտուղարներին խորհուրդ կտամ երբեք չասել no comment, դա ամենաասարսափելի պատասխանն է: Այդ մասին գրել եմ նաեւ իմ գրքերից մեկում»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ



# Ուսուցչի վարկանիշն ամենաբարձրն է Չինաստանում

Սասսեքսի համալսարանի պրոֆեսոր Պիտեր Դոլտոնի կազմած ուսուցիչների հասարակական կարգավիճակի միջազգային սանդղակում առաջին տեղը զբաղեցնում են չին ուսուցիչները: Հետազոտության արդյունքները հրապարակված են Varkey Gems Foundation կազմակերպության կայքէջում:

Վարկանիշներով Չինաստանին հաջորդում են Հունաստանը եւ Թուրքիան, ապա՝ Հարավային Կորեան, Նոր Զելանդիան, Եգիպտոսը եւ Սինգապուրը: Տասնյակը եզրափակում են Հոլանդիան, ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան:



Varkey Gems Foundation-ի հովանավորությամբ անցկացված հետազոտության ընթացքում հարցումներ են անցկացվել աշխարհի 21 երկրում: Վարկանիշը որոշվել է մի քանի գործոններով, այդ թվում՝ ուսուցչի կարգավիճակը մյուս մասնագիտությունների ներկայացուցիչների համեմատությամբ, աշակերտների մեջ հարգանքի մակարդակը, աշխատավարձի մակարդակը, ինչպես նաեւ երկրում ուսուցչական կարիերայի գնահատանքի աստիճանը:

Չինաստանում հարցման մասնակիցների 50 տոկոսը հայտարարել է, որ հավանություն կտար, եթե զավակներն ընտրեին ուսուցչի կարիերան: Չինացիների կարծիքով, կարգավիճակով ուսուցչությանն ամենամոտիկ զբաղմունքը բժշկությունն է: BBC-ն նշում է, որ Մեծ Բրիտանիայում բժիշկներին ամենից հաճախ համեմատել են հիվանդապահների եւ սոցիալական աշխատողների հետ, ԱՄՆ-ում՝ գրադարանավարների, Ճապոնիայում՝ տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ:

Աշխարհում ուսուցիչների հանդեպ աշակերտների ամենամեծ հարգանքն արձանագրվել է Չինաստանում, Սինգապուրում եւ Թուրքիայում, նվազագույն հարգանքը՝ Բրազիլիայում, Իսրայելում եւ Հարավային Կորեայում:

Varkey Gems Foundation-ը ոչ առեւտրային բարեգործական կազմակերպություն է, որը գործում է կրթության ոլորտում: Հիմնադրամի նախագծերի թվում են Պակիստանում ջրհեղեղից տուժած շրջանների դպրոցի վերականգնումը, Նայրոբիում աղքատ երեխաների համար դասարանների կառուցումը, Հնդկաստանի դպրոցների պարենավորումը:

Պ. Ք.

# Կոնգրեսի շենքի մոտ ոստիկանների կողմից սպանված կինը տառապում էր դեպրեսիայից

Վաշինգտոնում՝ Կապիտոլիումի բլրի վրա, տեղական ժամանակով հինգշաբթի ցերեկը ոստիկանները գնդակահարել են Սպիտակ տան արգելափակոցներին ավտոմեքենայով եւ ապա Կոնգրեսի շենքին մոտեցած մի կնոջ, որը թերեւս հոգեկան խանգարում էր ունեցել: Խոսքը 34-ամյա աֆրոամերիկուհի Միրիամ Քեյրիի մասին է: Նրա հարազատները ABC հեռուստաալիքի թղթակցին ասել են, որ ատամնաբուժությամբ զբաղվող այդ կինը տառապում էր հետծննդաբերական դեպրեսիայով:



Սպանված մայրը պատմել է, որ անցյալ տարվա օգոստոսին աղջնակի ծնունդից հետո Միրիամը դեպրեսիվ վիճակներում էր եղել երեխայի վաստառողջության պատճառով եւ որոշ ժամանակ հենց ինքն էր բուժվել:

Մեկամյա դուստրը՝ Էրիկան, ավտոմեքենայի մեջ էր, երբ Քեյրին «գրոհեց» Սպիտակ տան վրա: Ոստիկանությունում երեկ ԶԼՄ-ներին ասել են, որ աղջնակը չի տուժել եւ այժմ ապահով տեղում է:

Նախօրեին Միրիամ Քեյրին ավտոմեքենայով մոտեցել էր Սպիտակ տան ցանկապատին, որտեղից 5 րոպեում կարելի է հասնել Կոնգրեսի շենք: Նրա սեւ ավտոմեքենան սխալ մանեւրելու կամ նպատակամետ գործողության հետեւանքով բախվել էր արգելափակոցներին եւ գրավել անվտանգության ուժերի ուշադրությունը: Կինը փորձել էր փախուստի դիմել եւ սլացել էր Կապիտոլիումի բլրի կողմը: Նրան սկսել էին հետապնդել 20 ոստիկանական մեքենաներ, որոնք կարգազանցին հասել էին Սենատի շենքերից մեկի մոտ: Ոստիկանները կրակ էին բացել ավտոմեքենայի վրա եւ սպանել կասկածյալին:

Նախապես հաղորդվել էր, թե առաջինը կինն է կրակել: Սակայն շուտով իշխանությունները խոստովանել էին, որ նա եղել է անզեն:

Իրավապահներն անմիջապես բացառել էին քրեական եւ ահաբեկչական վարկածները: Սպանվածի ծանոթները նույնպես պնդում են, որ նրա գրառումների համաձայն, կինը թերեւս հոգեկան խանգարումներ է ունեցել: Ատամնաբուժական կլինիկայի՝ նրա աշխատավայրի, գլխավոր բժիշկն ասել է, որ մի քանի տարի առաջ Միրիամ Քեյրին ընկել էր սանդուղքից եւ գանգուղեղային վնասվածք էր ստացել:

Միջադեպի քննությունը շարունակվում է:

Պ. Ք.

# Ռուսաստանցի դիվանագետները հեռացել են Լիբիայից

Հոկտեմբերի 4-ին Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում վայրէջք է կատարել ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարության օդանավը Լիբիայի ռուսական դեսպանության աշխատակիցներով: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

Ինտերֆաքս գործակալության տվյալներով, օդանավում եղել է ՌԴ 51 քաղաքացի: Չվերթը կատարվել է Թունիսից դեպի Մոսկվա:

Նախօրեին Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիից Թունիս էին մեկնել ռուսաստանցի դիվանագետները եւ նրանց ընտանիքների անդամները: Դիվանագետներից ոմանք չէին թռել Մոսկվա, որտեղ Թունիսից շարունակեն բանակցությունները լիբիական կողմի հետ:

Հոկտեմբերի 2-ին Տրիպոլիում ՌԴ դիվանագիտական ներկայացուցչության շենքի մոտ անցկացվել էր բողոքի ցույց: Պատճառը լիբիական օդուժի մի սպայի սպանությունն էր, որին, ըստ որոշ տվյալների, մեղսակից է ՌԴ քաղաքացուհի Եկատերինա Ուսյուժանինովան: Նա ձերբակալված է:

Ցուցարարները կոտրել էին դեսպանատան դարպասը եւ հրկիզել մի ավտոմեքենա: Պահապանները կրակ են բացել ցուցարարների վրա, որոնցից մի քանիսին հաջողվել էր ներխուժել շենք: Նրանցից մեկը սպանվել էր: Դիվանագետները թաքնվել էին ապահով հարկաբաժիններում:

Լիբիայի արտգործնախարար Մուհամմեդ Աբդել-Ազիզը ՌԴ դեսպան Իվան Մոլոտկովին ասել էր, որ ինքը չի կարող երաշխավորել ռուսաստանցի դիվանագետների անվտանգությունը: Դրանից հետո վերջիններս տարհանվել էին:

Պ. Ք.

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

# Ավարտվեց «Կոմիտաս Վարդապետ» համահայկական փառատոնը



Հոկտեմբերի 3-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված «Կոմիտաս Վարդապետ» համահայկական փառատոնի փակման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանը, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, պետական-հասարակական գործիչներ, Կոմիտասի արվեստի երկրպագուներ:

**Հրանուշ Հակոբյանը** նշեց. «Կոմիտաս Վարդապետ» փառատոնի անցկացումը նպաստեց հայկական Սփյուռքի մշակութային եւ հոգեւոր համախմբմանը Կոմիտասի արվեստի շուրջը: Այս օրերին անգամ ճապոնացու, գերմանացու եւ թուրքի շուրթերից հնչեցին Կոմիտասի ստեղծագործությունները»:

Սեպտեմբերի 26-ից մեկնարկած փառատոնի մասնակից երգչախմբերն ու անհատ կատարողները, ովքեր Երեւանում, Գյումրիում, Վանաձորում եւ Էջմիածնում ելույթներ են ունեցել տարբեր բեմերում, փակման հանդիսավոր միջոցառման ժամանակ հանդես եկան կոմիտասյան կատարումներով:

Աշխարհի 9 երկրից եւ Արցախից ժամանած մասնակիցները հիացրին հանդիսատեսին իրենց կատարումներով: Տպավորիչ ելույթով հանդես եկավ Ասուկա Յոշիզակը Ճապոնիայից, ով հազարամյա պատմություն ունեցող ճապոնական կոտո նվագարանով նվագում էր Կոմիտասից ստեղծագործություններ: Ավստրիայի ներկայացուցիչ Յուհեի Ծուչիդան կատարեց «Հով արեք, սարեր ջան» երգը: Հանդես եկան նաեւ Աննա Մայիլյանը, Շահե Քեշիշյանը Սիրիայից, Գեւորգ Հաճյանը՝ Լիբանանից, «Արարատ» երգչախումբը Իրանից, «Օվսաննա» եւ «Նորահրաշ» երգչախմբերը Ռուսաստանից: Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբը եւ ՀՀ սփյուռքի նախարարության հովանու ներքո գործող Համահայկական պատանեկան սիմֆոնիկ նվագախումբը:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց Հայկ Սայադյանի՝ Կոմիտասին նվիրված ալեգորիկ ֆիլմը:

Հայ երգարվեստի մի խումբ նվիրյալներ իրենց վաստակի, ինչպես նաեւ «Կոմիտաս Վարդապետ» համահայկական փառատոնի կայացմանը նպաստելու համար ՀՀ սփյուռքի նախարարության ոսկե մեդալով պարգեւատրվեցին Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը, «Կոմիտաս» մեդալով պարգեւատրվեցին ՀՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանը, «Կոմիտաս Վարդապետ» համահայկական փառատոնի ղեկավար Սամվել Հարոյանը, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դասախոս Կարինե Բրուտյանը: ՀՀ սփյուռքի նախարարության շնորհակալագրերով պարգեւատրվեցին Կոնսերվատորիայի ռեկտոր Շահեն Շահինյանը, համահայկական պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Եսայանցը:

Փառատոնի մասնակից երգչախմբերին եւ անհատ կատարողներին տրվեցին մասնակցության հավաստագրեր եւ հուշանվերներ:

# Գրադարանավարները կնշեն իրենց մասնագիտական տոնը

**Հայաստանում հոկտեմբերի 7-ը պաշտոնապես նշվում է որպես «Գրադարանավարի օր»:**

**Գրադարաններն այժմ պատրաստվում են այդ օրվան՝ կազմակերպելով ավելի քան 300 միջոցառում. կլոր սեղաններ, գրական-գեղարվեստական երեկոներ, գրադարանային խնդիրների քննարկումներ, հանդիպումներ գիտության, մշակույթի, գրականության նշանավոր անձանց հետ եւ այլն:**

**Այս տարի առանձնակի ուրախությամբ իրենց մասնագիտական տոնը կնշեն Շիրակի մարզային գրադարանի գրադարանավարները: Հոկտեմբերի 7-ին Շիրակի նորաբաց մարզային գրադարանն իր հարկի տակ կհյուրընկալի հանրապետության մշակույթի եւ գրադարանային ոլորտի ներկայացուցիչներին, ընթերցողներին: Գրադարանի շենքը, որը համարվում է Գյումրի քաղաքի - պատմաճարտարապետական շինություններից մեկը, վերակառուցվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի, Իտալիայի կառավարության եւ ՀՀ կառավարության ֆինանսական աջակցությամբ:**

Ս. Հ.

# Անգլիահայ քրոնիկ

## *«Ծաղկաքաղ Մը Երեբունիէն», հեղինակ՝ Տոքթ. Անդրէաս Ծուլիկեան*

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

**Եգիպտահայ գաղութը պատմական նշանակալից դեր մը կատարած է Սփիւռքի կազմութեան մէջ: Իր փառքի օրերուն՝ միշտ ձեռք մեկնած է կազմուող այլ գաղութներուն, նիւթապէս ու գաղափարականօրէն սատարելով անոնց, իսկ եգիպտահայ համայնքի կազմալուծումէն ետք ալ՝ երիտասարդ թէ տարեց գործիչներ իրենց փորձառութիւնն ու ձիրքերը տարած են իրենց հետ մասուցանելու հայկական այլ գաղութներուն:**

**Արդարեւ, եգիպտահայ գաղութին մէջ հասակ առած եւ ազգային դաստիարակութիւն ստացած բազմաթիւ երիտասարդներ, իրենց անձնական ասպարէզին կողքին, ղեկավար դերեր ստանձնեցին Աւստրալիոյ, Քանատայի, Քալիֆորնիոյ եւ այլ գաղութներու մէջ: Ինծի ծանօթ շատ մը եգիպտահայ երիտասարդներ օգտուելով Բարեգործականի կամ Եղիայեանի ֆոնտի կրթաթոշակներէն՝ գացած եւ կորսուած են իրենց մասնագիտութեան շրջանակներուն մէջ, առանց սատարելու ազգային կեանքին: Սակայն, ուրիշ խումբ մըն ալ հաւատաւոր կերպով նուիրուած է ազգային կեանքին՝ աւելիով հատուցանելով իր վայելած բարիքները: Այս վերջին խումբին ամենէն փայլուն ներկայացուցիչներէն մէկը հանդիսացած է Տոքթ. Անդրէաս Ծուլիկեան, կատարելով անփոխարինելի դեր մը անգլիահայ գաղութի կեանքին մէջ:**

**Ես Տոքթ. Ծուլիկեանը ճանչցած եմ Գահիրէի մէջ եւ ապա պարբերաբար հանդիպած եմ իրեն Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ, ինչպէս նաեւ այլուր: Այդ պարբերական հանդիպումները, ինչպէս նաեւ պարագայական ընթերցումները Լոնտոնի «Երեբունի» պարբերականին մէջ լոյս տեսած իր յօդուածներուն, բնականաբար չէին կրնար ամբողջական պատկեր մը տալ իր բոլորանուէր ծառայութեան մասին: Ահա այդ բացը լրացնելու համար հրատարակուած է 350 էջերու վրայ տարածուող գիրք մը՝ «Ծաղկաքաղ մը Երեբունիէն» վերնագրով, հանգուցեալ բժիշկին երկու եղբայրներուն՝ Տիգրանի եւ Յակոբի գուրգուրոտ ջանքերով:**

**«Երեբունի» երկշաբաթաթերթը հրատարակուած է Լոնտոնի Թէքէեան Մշակութային Միութեան կողմէ 1980-էն մինչեւ 1996, խմբագրութեամբ Տոքթ. Անդրէաս Ծուլիկեանի: Ան մասնագիտութեամբ եղած է ոսկրաբան վիրաբոյժ եւ հակառակ իր բժշկական ծանրաբեռն պատասխանատուութեանց՝ անխախտ հետեւողականութեամբ հրատարակած է «Երեբունի»ն գրեթէ արհեստավարժ մակարդակով:**




**Միայն թերթին անխափան եւ բովանդակալից հրատարակութիւնը արդէն բաւարար պիտի ըլլար երկիւղածութեամբ խոնարհելու հանգուցեալ բժիշկին յիշատակին առջեւ, սակայն ան իր խօսքին միացուցած է նաեւ գործը՝ ղեկավար պաշտօններ ստանձնելով ՌԱԿ-ի,Թէքէեանի, Բարեգործականի եւ եկեղեցւոյ կազմերէն ներս:**

**Ան իր ինքնակենսագրութեան մէջ ամբողջական կերպով կ՚ամփոփէ այն մղիչ ուժերը, որոնք զինք առաջնորդած են ազգային ծառայութեան: Արդարեւ ան կ՚ըսէ.- «Բնաւորութեամբ եղած եմ յարատեւող եւ սկզբունքային, նաեւ գաղափարապաշտ, բայց գործնական նկարագրով անձնաւորութիւն մը: Եթէ հաւատացած եմ գաղափարախօսութեան մը կամ սկզբունքի մը՝ ամբողջ էութեամբ յարած եմ այդ գաղափարախօսութեան եւ աշխատած եմ անոր յաջողութեան եւ իրականացման ի նպաստ, անշուշտ կարողութիւններուս սահմանին մէջ»:**

**Ընթերցողը կարդալով գիրքին մէջ ամփոփուած խմբագրականները, լրատու էջերն ու ճառերը, ամբողջական պատկերը կ՚ունենայ այդ տարիներու լոնտոնահայ կեանքին - Ապրիլ 24, Խորհրդային Հայաստանի 60ամեակ, քաղաքական անցուդարձեր, ներգաղթային պայքարներ՝ առանցքը կը կազմեն այս հատորին: Այդ պատճառով ալ՝ կարելի է զայն բնորոշել իբրեւ քրոնիկագրութիւն լոնտոնահայ կեանքի:**

**Հեղինակը, ոչ միայն կ՚ընծայէ իր անձնական համոզումները, այլ նաեւ կը ցոլացնէ իր պատկանած կազմակերպութեան կեցուածքն ու գաղափարականը՝ բոլոր էական ազգային հարցերու նկատմամբ:**

**Իր պատասխանատուութեանց բերումով Տոքթ. Ծուլիկեան նաեւ մասնակցած է ազգային բանավէճերու՝ սակայն իրեն յատուկ զսպուածութեամբ եւ իմաստութեամբ:**

**Հատորին վերջին մասին մէջ զետեղուած են անգլերէն գրութիւնները, որոնք հայ գաղութին եւ ազգային հարցերուն վերաբերելով հանդերձ՝ ուղղուած են անգլիական մամուլի կեդրոններուն եւ պետական շրջաններուն. անոնք կ՚ընդգրկեն այն գրութիւնները ուր դիմումներ կատարուած են Հայկական ցեղասպանութեան ու Հայ դատին ճանաչման ի խնդիր: Այդ դիմումներուն դիմաց զետեղուած են նաեւ մամուլի, հեռուստացոյցի, վարչապետարանի կողմէ տրուած պատասխանները, ուր անգլիական սառնասրտութեամբ անգամ մը եւս կ՚ոտնակոխուին արիւնոտ հայկական դատն ու պատմական ճշմարտութիւնները:**

**Տոքթ. Անդրէաս Ծուլիկեան իր ասպարէզին մէջ բուժած է բազմահազար հիւանդներ, սակայն անբուժելի հիւանդութիւն մը զինք զգետնեց վաղահասօրէն: Ներկայ հատորը վկայութիւնն է իր անկորնչելի ծառայութեան եւ գաղափարական նուիրումին, հատոր՝ զոր իր հարազատ եղբայրները կ՚ընծայեն ընթերցող հասարակութեան:**

**Հատորին ընթերցումը միայն յարգանք ու հիացում կը ներշնչէ Տոքթ. Անդրէաս Ծուլիկեանի օրինակելի կեանքին ու յիշատակին հանդէպ:**

# «Ագուլիսի 1919թ. ողբերգություն-եղեռնը»

Լույս է տեսել «Ագուլիսի 1919թ. ողբերգություն-եղեռնը» գիրքը, որտեղ ներկայացված է, թե ինչ վայրագություններ են տեղի ունեցել Արեւմտյան Հայաստանում:

«Հատորում ներառված են 1919թ. դեկտեմբերի 24-25-ին Գողթն գավառի սիրտը համարվող Ագուլիս քաղաքի հայ բնակչությանը կոտորածի ենթարկելու վերաբերյալ 7 ականատեսների (Ի. Տեր-Անտոնյան, Ն. Ավչարյան, Կ. Սիմոնյան, Շ. Հախնազարյան, անհայտ հեղինակ, Թ. Հայրապետյան, Հ. Հախնազարյան) եւ 8 ժամանակակիցների (Գ. Սարգսյան, Պ. Պետրոսյան, Հ. Անագչյան, Գ. Փանյան, Վ. Միքայելյան, Վ. Կզարթմյան, Ե. Մելիք-Մուսյան, Ավո) վկայություն-հուշագրությունները: Վերջիններս, չորսից բացի (Ի. Տեր-Անտոնյան, Հ. Հախնազարյան, Ն. Ավչարյան, Ավո), հրատարակվում են առաջին անգամ եւ կարեւոր փաստաթղթեր են




Ագուլիսի ողբերգությունը, ինչպես եւ Նախիջեւանի գավառի 1918-21 թթ. իրադարձությունները հանգամանալից ուսումնասիրելու համար», ասաց գրքի հեղինակ **Արգամ Այվազյանը**:

Ըստ նրա, Արեւմտյան Հայաստանում եղած եղեռնագործությունները քիչ են լուսաբանվել. «Յուշագրողները պատահական մարդիկ չեն, նրանք բոլորն էլ կիրթ մարդիկ են, որոնք հստակորեն պատմում ու ներկայացնում են այն ամենը, ինչ կատարվել է»:

«Ագուլիսի 1919թ. ողբերգություն-եղեռն» աշխատությունը լույս է տեսել 300 օրինակով եւ արդեն կա գրախանութներում: Գրքի հեղինակը ցավով փաստեց, որ նման գրքերը գրախանութներում վաճառվում են հինգ, տասը տարիների ընթացքում:

Նշենք, որ գրքի հավելվածին կցված են Ագուլիսի 1919-1920 թվականների 15 փաստաթղթեր եւ Նախիջեւանի մի քանի բնակավայրերի փաստավավերագրական լուսանկարներ: Աշխատության մեջ զետեղված են հատվածներ ծնունդով ագուլիսցի, Ադրբեջանի ժողովրդական գրող Աքրամ Այլիսլիի «Քարե երազներ» վեպ-ռեքվիեմից:

Ս. Հ.

# Երիտասարդական հավաքականը սկսում է նախապատրաստությունը




Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականն այսօր Ավանի ֆուտբոլի ակադեմիայում սկսում է նախապատրաստությունը հոկտեմբերի 10-ին Ֆրանսիայի եւ հոկտեմբերի 14-ին Ղազախստանի երիտասարդական հավաքականների հետ Երեւանում կայանալիք ընտրական մրցախաղերին: Ֆրանսիացիների հետ հանդիպումը տեղի կունենա «Հրազդան» մարզադաշտում եւ կսկսվի ժամը 21-ին: Իսկ ղազախներին մեր ֆուտբոլիստները կհյուրընկալեն «Հանրապետականում»: Խաղը կսկսվի ժամը 18-ին:

Հայաստանի երիտասարդական հավաքականն ընդգրկված է ընտրական 10-րդ խմբում: Մեր ընտրանին անցկացրած 2 հանդիպումներից հետո 3 միավորով 3-րդ տեղում է: Առաջատարն Իսլանդիայի հավաքականն է, որը շահել է բոլոր 4 հանդիպումները: Հաջող է մեկնարկել նաեւ Ֆրանսիայի հավաքականը, որը 2 խաղերում էլ հաղթել է:

ՀՀ հավաքականն անհաջող մեկնարկեց՝ սեփական հարկի տակ 1-2 հաշվով պարտվելով իսլանդացիներին: Իսկ 2-րդ խաղում մեր ֆուտբոլիստները հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեցին ղազախներին: Վերջիններս 4 խաղից վաստակած 3 միավորով 4-րդ տեղում են:

Ֆրանսիայի հավաքականը մեկնարկային խաղում սեփական հարկի տակ 5-0 հաշվով ջախջախեց ղազախներին, ապա հյուրընկալվելիս 2-1 հաշվով պարտության մատնեց Բելառուսի ընտրանուն, որը բոլոր 4 խաղերում էլ անհաջողության է մատնվել:

Երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը հավաքի է հրավիրել հետեւյալ 23 ֆուտբոլիստներին:

Դարպասապահներ՝ Գոռ Մանուկյան («Փյունիկ»), Արսեն Բեգլարյան («Գանձասար»), Արթուր Թորոյան («Բանանց»), պաշտպաններ՝ Վասպուրակ Մինասյան («Փյունիկ»), Տարոն Ոսկանյան («Փյունիկ»), Վարազդաս Հարոյան («Փյունիկ»), Գրիգոր Հովհաննիսյան («Փյունիկ»), Արման Հովհաննիսյան («Փյունիկ»), Արամ Շախնազարյան («Բանանց»), Դավիթ Մարիկյան («Շիրակ»), Ալեն Համբարձումյան («Գանձասար»), կիսապաշտպաններ՝ Վահագն Այվազյան («Բանանց»), Նաիրի Մինասյան («Բանանց»), Գագիկ Պողոսյան («Փյունիկ»), Աշոտ Սարդարյան («Փյունիկ»), Աղվան Պապիկյան («Փյունիկ»), Գոռ Մալաքյան («Փյունիկ»), Դավիթ Հակոբյան («Շիրակ»), Կարեն Մուրադյան («Շիրակ»), Կարեն Հակոբյան («Շիրակ»), հարձակվողներ՝ Սարգիս Բալոյան («Փյունիկ»), Վիուլեն Այվազյան («Փյունիկ»), Սարգիս Ադամյան («Հանզա», Ռոստոկ, Գերմանիա):

# «Շախտյորը» ձեռքից բաց թողեց հաղթանակը

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի 2-րդ տուրում Կարագանդայի «Շախտյորը», որի կազմում հանդես է գալիս ՀՀ հավաքականի կիսապաշտպան Գեւորգ Ղազարյանը, սեփական հարկի տակ ոչ-ոքի (2-2) խաղաց Հայֆայի «Մաքաբիի» հետ: Ղազարյանը դարձավ գոլային փոխանցման հեղինակ: «Շախտյորը» ձեռքից բաց թողեց հաղթանակը: Առաջին խաղակեսում Ֆինոնչենկոն եւ Տարասովը 2 գոլ խփեցին, սակայն ընդմիջումից հետո հյուրերը վերականգնեցին հավասարակշռությունը: L խմբում հանդես եկող «Շախտյորն» առաջին միավորը վաստակեց: 4-ական միավորով աղյուսակը գլխավորող «Ալկմարի» եւ ՊԱՕԿ-ի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:

A խմբում անհաջող է խաղում «Կուբանը», որը 2-րդ խաղն էլ տանուլ տվեց՝ պարտվելով «Վալենսիային» (0-2): Առաջատար «Սուոնսին» 2-րդ հաղթանակը տոնեց շվեյցարական «Սանկտ Գալենի» նկատմամբ (1-0):

B խմբում 2-րդ հաղթանակը տոնեց «Լուդոգորեցը»՝ հաղթելով Զագրեբի «Դինամոյին» (3-0): Մյուս խաղում Օդեսայի «Չեռնոմորեցը» սեփական հարկի տակ 0-2 հաշվով պարտվեց «Էյնդհովենին»:

D խմբում հաջող է մեկնարկել Կազանի «Ռուբինը», որը հաղթելով «Վարեգեմին», 6 միավորով ամրապնդեց առաջատարի դիրքը: 2-րդ տեղում 4 միավորով «Վիգանն» է, որը 3-1 հաշվով պարտության մատնեց «Մարիբորին»:

«Զալցբուրգի» ֆուտբոլիստները 2-րդ հաղթանակը տոնեցին ու 6 միավորով գլխավորեցին C խմբի աղյուսակը: Մրցակիցը դանիական «Էսբերգն» էր, որը սեփական հարկի տակ պարտվեց 1-2 հաշվով: «Էլֆսբորգ»-«Ստանդարտ» խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:

E խմբի առաջատարներ «Դնեպրի» եւ «Ֆիորենտինայի» մրցավեճն ավարտվեց իտալացիների հաղթանակով՝ 2-1: «Ֆիորենտինան» 6 միավորով միանձնյա գլխավորեց աղյուսակը: «Պասուշ»-«Պանդուրի» խաղն ավարտվեց 1-1 հաշվով:

F խմբում «Այնտրախտը» 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ Կիպրոսում 3-0 հաշվով ջախջախելով «Ապոելին»: Թել Ավիվի «Մաքաբին» էլ հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեց «Բորդոյին»:

G խմբում հանդես եկող Կիեւի «Դինամոն» առաջին միավորը վաստակեց՝ 2-2 հաշվով ավարտելով արտագնա հանդիպումը «Ռապիդի» հետ:

Մյուս խաղերում գրանցվել են այսպիսի արդյունքներ. «Գենկ»-«Թուն»՝ 2-1, «Սեւիլիա»-«Ֆրայբուրգ»՝ 2-0, «Սլովան»-«Էշտորիլ»՝ 2-1, «Ռիեկա»-«Բետիս»՝ 1-1, «Լիոն»-«Վիկտորիա»՝ 1-1, «Լեգիա»-«Ապոլոն»՝ 0-1, «Տրաբզոնսպոր»-«Լացիո»՝ 3-3, «Տրոմսյո»-«Շերիֆ»՝ 1-1, «Անժի»-«Տոտենհեմ»՝ 0-2:

# Մկրտչյանը նախավերջին տեղում է

**Վրոցլավում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Լիլիթ Մկրտչյանը պարտվեց առաջատարներից մեկին՝ Նինո Բացիաշվիլուն: Վերջինս 4,5 միավորով միանձնյա գլխավորեց աղյուսակը, իսկ Լիլիթը 2,5 միավորով նահանջեց նախավերջին՝ 9-րդ հորիզոնական: Աղյուսակը կես միավորով եզրափակում է գերմանուհի Մարթա Միչնան:**

# «Մանչեսթր Յունայթեդը» համալրման կարիք ունի

**«Մանչեսթր Յունայթեդի» ղեկավարությունը մտադիր է 50 մլն ֆունտ ստեռլինգ հատկացնել թիմի գլխավոր մարզիչ Դեյվիդ Մոյեսին ձմռան տրանսֆերային շրջանում նոր ֆուտբոլիստներ գնելու համար: Անգլիայի ընթացիկ առաջնությունում թիմն անհաջող է մեկնարկել՝ 6 խաղում վաստակած 7 միավորով ընթանալով 12-րդ տեղում: 1989-ից սկսած, դա թիմի պատմության մեջ ամենաանհաջող մեկնարկն է:**

**Ամենայն հավանականությամբ, հատկացվելիք գումարը կծախսվի «Էվերտոնի» պաշտպան Լեյթոն Բեյնսին եւ Մադրիդի «Ատլետիկոյի» կիսապաշտպան Անդեր Էրերային գնելու համար: Նրանց «Մանչեսթր Յունայթեդը» դեռ ամռանն էր ցանկանում թիմ հրավիրել, սակայն կողմերը համաձայնության չեկան:**

ՇԱԽՄԱՏ

# Մեր առաջատար եռյակն առաջին միավորները կորցրեց

**Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում ընթացող շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնության 5-րդ տուրում աղյուսակը գլխավորող 3 հայ շախմատիստներն էլ առաջին միավորները կորցրին: Մինչեւ 10 տարեկանների մրցաշարի միանձնյա առաջատար Արմեն Բարսեղյանը ոչ-ոքի խաղաց Դավիթ Գավրիլեսկուի հետ ու վաստակեց 4,5 միավոր: Դա հնարավորություն տվեց Մահամադ Մուրադիին, Արսենի Նեստերովին եւ Վեգնիր Սթեֆանսոնին միավորներով հավասարվելու հայ շախմատիստին՝ նրա հետ գլխավորելով աղյուսակը: Տարիքային այս խմբում հանդես եկող Հակոբ Հակոբյանն ունի 3,5 միավոր: Նա**




**առաջին պարտությունը կրեց Արսենի Նեստերովի հետ մրցավեճում: Նույնքան արդյունք ունի նաեւ Գոռ Մելքոնյանը:**

**Մինչեւ 16 տարեկանների մրցաշարի առաջատար Տիգրան Հարությունյանն էլ առաջին կես միավորը կորցրեց՝ հաշտություն կնքելով Դմիտրի Խեգայի հետ: Տիգրանը 4,5 միավորով Կիրիլ Ալեքսեենկոյի եւ Ալեքսեյ Զենզերայի հետ մրցաշարի առաջատարն է:**

**Իսկ ահա մինչեւ 18 տարեկանների մրցաշարի առաջատար Հովհաննես Գաբուզյանը 4 անընդմեջ հաղթանակներից հետո առաջին պարտությունը կրեց՝ զիջելով իր հայրենակից Կարեն Գրիգորյանին: Վերջինս եւս վաստակեց 4 միավոր: Նույնքան արդյունք ունի նաեւ Արման Միքայելյանը, որը հաղթեց Թոմաս Կրաուսին: Մեր եռյակը հետապնդում է 5 միավորով աղյուսակը գլխավորող իսպանացի Դավիթ Պարդոյին:**

**Իր մրցաշարային վիճակը զգալիորեն բարելավեց մինչեւ 14 տարեկանների մրցաշարում կայծակնային խաղի Եվրոպայի չեմպիոն Հայկ Մարտիրոսյանը՝ տոնելով 2-րդ անընդմեջ հաղթանակը Մուլեթ Ինիգո Լոպեսի նկատմամբ: Հայկը 4 միավորով հետապնդում է մրցաշարի առաջատարներ Յորդեն վան Ֆորեստին եւ Սեմյոն Էլիստրատովին, որոնք 4,5-ական միավոր են վաստակել:**

**Հայ շախմատիստուհիներից առավել հաջող են հանդես գալիս Մանե Ադամյանը (մինչեւ 12 տարեկաններ) եւ Անի Հարությունյանը (մինչեւ 16 տարեկաններ), որոնք վաստակել են 3,5-ական միավոր: Մանեն առաջին պարտությունը կրեց Օլգա Բադելկայի հետ մրցախաղում: Նա 11-րդ տեղում է: Առաջատարներն են 5-ական միավոր ունեցող Գաբրիելա Անտովան եւ Պոլինա Շուվալովան: Անի Հարությունյանը հաշտություն կնքեց Սառա Յակիմովիչի հետ: Անին 3,5 միավորով 8-րդ տեղում է: Նա մեկ միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Աննա Ստյաժկինային, Մարիա Բլումին ու Մարինա Կասանովային:**

# Հայաստանից ռինգ դուրս կգան 6 բռնցքամարտիկներ




**Հոկտեմբերի 14-ին Ղազախստանի Ալմաթի քաղաքում կայանալիք բռնցքամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանից ռինգ դուրս կգան 6 բռնցքամարտիկներ՝ Կորյուն Սողոմոնյանը (49 կգ), Նարեկ Աբգարյանը (52 կգ), Արամ Ավագյանը (56 կգ), Արթուր Քիրաջյանը (64 կգ), Հովհաննես Բաչկովը (60) եւ Արման Հովիկյանը (75 կգ):**

**Աշխարհի առաջնությունում հանդես կգան ռեկորդային թվով բռնցքամարտիկներ (576) 116 երկրներից: Մրցաշարը կանցկացվի նոր մրցակարգով. բռնցքամարտիկները ռինգ դուրս կգան առանց դիմակի, իսկ միավորների հաշվարկը նոր կարգով կկատարվի: Հաղթողին կտրվի 10 միավոր, իսկ պարտվողին՝ 9, 8 կամ 7 միավոր:**

**Բռնցքամարտի ՀՀ ազգային հավաքականը գլխավոր մարզիչ Կարեն Աղամալյանի, ավագ մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանի եւ բժիշկ Համլետ Բեգոյանի ուղեկցությամբ մեկնել է Բիշքեկ՝ Ղրղզստանի, Լիտվայի եւ Գերմանիայի թիմերի հետ համատեղ հավաք անցկացնելու, որից հետո կուղեւորվի Ալմաթի:**

**Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Արման Մուրադյանը եւ առաջին փոխնախագահ, պատվիրակության ղեկավար Դերենիկ Գաբրիելյանը կմասնակցեն հոկտեմբերի 12-ին մեկնարկելիք սիրողական բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի հերթական համաժողովին:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# IDeA հիմնադրամը աջակցում է վիքի-նախագծերին Հայաստանում

IDeA հիմնադրամը, որը միավորում է հայտնի գործարար եւ բարեգործ Ռուբեն Վարդանյանի ընտանիքը, ընկերներին ու համախոհներին, որոշել է աջակցել «Վիքիմեդիա Հայաստան» հասարակական կազմակերպությանը:

Օգոստոսին ստորագրված պայմանագրի համաձայն, IDeA հիմնադրամը աջակցում է «Վիքիմեդիա Հայաստան»-ի այն նախագծերին, որոնք ուղղված են Սյունիքի եւ Տավուշի մարզերում վիքի-նախագծերի առաջխաղացմանը եւ ազատ հանրագիտարանի նախագծերում մարզերի երիտասարդության ներգրավմանը: Համագործակցության գլխավոր նպատակը հայերեն Վիքիպեդիայի որակական եւ քանակական ընդլայնումն է:

«IDeA հիմնադրամի հովանու ներքո իրագործվում են ռազմավարական բարեգործական նախաձեռնություններ՝ ուղղված կրթության եւ տուրիզմի զարգացմանը, ազգային ավանդույթների եւ հոգեւոր վերածննդի պահպանմանը: Այս լույսի ներքո մենք կարեւորում ենք հայերեն Վիքիպեդիայի զարգացումը՝ հայկական ժառանգությունը ցանցային տիրույթում արժանի կերպով ներկայացնելու համար»,- ասել է IDeA հիմնադրամի նախագահ **Ռուբեն Վարդանյանը**:

«Վիքիմեդիա Հայաստան» հասարակական կազմակերպության նախագահ Սուսաննա Մկրտչյանն ասել է, որ «IDeA հիմնադրամի հետ համագործակցության այս կարճ ժամանակահատվածում Գորիսում սեմինար էր կազմակերպվել «Վիքին սիրում է հուշարձաններ» մրցույթի շրջանակներում, որի շնորհիվ երիտասարդները վիքի- նախագծերին մասնակցելու որոշակի հմտություն են ձեռք բերել, իսկ ազատ հանրագիտարանը հարստացել է Սյունիքի եւ Տավուշի մասին պատմող հոդվածներով ու լուսանկարներով»:

Սյունիքի եւ Տավուշի մարզերի ընտրությունը պատահական չէ. այս մարզերում IDeA հիմնադրամն իրականացնում է լայնածավալ բարեգործական նախագծեր՝ Դիլիջանի միջազգային դպրոցը եւ «Տաթեւի վերածնունդը»:

Հոկտեմբերի 5-ից 6-ը Հայաստանի Ամերիկյան համալսարանում կկայանա «Վիքիկոնֆերանս Երեւան 2013»-ը, որը կամփոփի հայկական վիքի համայնքի տարեկան ձեռքբերումները եւ կմշակի վիքի-նախագծերի եւ ազատ բովանդակության զարգացմանն ուղղված նոր մոտեցումներ:

***

**«Վիքիմեդիա Հայաստան»-ը ոչ առեւտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2013 թ. մայիսին եւ Վիքիմեդիա հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղն է: Կազմակերպության նպատակն է՝ խթանել վիքի-նախագծերի տարածումը եւ զարգացումը Հայաստանում եւ տարածաշրջանում, հանրայնացնել ազատ գիտելիքի գաղափարը: 2013 թ. հոկտեմբերի 2-ի դրությամբ հայերեն Վիքիպեդիայում կար 97 հազար հոդված:**

**IDeA հիմնադրամ-ը (Initiatives for Development of Armenia) Հայաստանի, Արցախի եւ հայկական սփյուռքի համար իրականացնում է ռազմավարական բարեգործական նախաձեռնություններ, որոնք ուղղված են ազգային-հոգեւոր եւ պատմական ժառանգության պահպանմանը, վերածննդմանը եւ միջազգային ճանաչմանը, կրթության զարգացմանը, մշակութային հարստացմանը եւ ազգի մրցունակության բարձրացմանը: IdeA-ն ստեղծվել է RVVZ հիմնադրամի կողմից, որի հիմնադիրներն են Ռուբեն Վարդանյանը եւ Վերոնիկա Զոնաբենդը:**

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ

# Ռուսական առաջին «Միստրալի» ջրարկումը՝ հոկտեմբերի 15-ին



**«Միստրալ» տիպի ռուսական առաջին ուղղաթիռակիրը՝ «Վլադիվոստոկը», ներկայումս վերջնակառուցվում է Ֆրանսիայի Սեն-Նազեր քաղաքի նավաշինարանում եւ ջուրը կիջեցվի հոկտեմբերի 15-ին: STX France ընկերությանը վկայակոչելով՝ այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:**

**Մոսկվան եւ Փարիզը Ֆրանսիայում երկու «Միստրալի» կառուցման պայմանագիրը ստորագրեցին 2011-ի հունիսին: Գործարքի գումարը կազմում է 1,2 մլրդ եվրո: Նավերի վրա կտեղադրվեն ռուսական հարվածային եւ պաշտպանական զենքերի նորագույն համակարգեր, այդ թվում՝ գերձայնային թեւավոր հրթիռներ:**

**2012 թ. փետրվարի 1-ից Ֆրանսիայում կառուցվող «Վլադիվոստոկը» ռուսական նավատորմի սպառազինության մեջ կմտնի 2014-ին: Սպասվում է, որ երկրորդ ռազմանավը՝ «Սեւաստոպոլը», նավատորմ մուտք կգործի 2015-ին:**


## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Համալսարանի **գերմանական լեզուների ամբիոնի** - մասնագետի տեղի համար հետեւյալ գործառույթներով եւ հմտություններով.

▼ կատարել ամբիոնի վարիչի հանձնարարականները
▼ տիրապետել համակարգչային գիտելիքների եւ անգլերեն լեզվի գերազանց իմացություն:

Հավակնորդները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

- Դիմում ռեկտորի անունով
- Ինքնակենսագրություն
- Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները
- Անձնագրի պատճենը
- Լուսանկար 1 հատ
- Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ մինչեւ ս.թ. հոկտեմբերի 10:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին

հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 17 , 200 սենյակ,
հեռ՝ 59-70-84:


**«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ**
**Անկախ աուդիտորական եզրակացություն N 99**
**«Գրանդ Մոթորս» ՍՊԸ**
**2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետությունների վերաբերյալ**
**Ներկայացվում է «Գրանդ Մոթորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը**

Մեր կողմից իրականացվել է «Գրանդ Մոթորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի եւ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը եւ այլ ծանոթագրություններ:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

**Աուդիտի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարվեցողության կանոնները եւ աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, եւ ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գրանդ Մոթորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաեւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը եւ դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

*20 սեպտեմբերի, 2013 թ.*
*«ՍՕՍ Աուդիտ» ՍՊԸ*
***ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ***
***Տնօրեն***

***ԳՆԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ, FCCA***
***Աուդիտոր***

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Գրանդ Մոթորս» ՍՊԸ**
**2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| ԱԿՏԻՎՆԵՐ | Ծնթ. | 31.12.2012 հազար դրամ | 31.12.2011 հազար դրամ |
|---|---|---|---|
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 452,759 | - |
| Կանխավճարներ ՀՄ-ի ձեռքբերման գծով | | 108,878 | - |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 12 | 75 | |
| | | 561,712 | |
| Ընթացիկ ակտիվներ | | | |
| Պաշարներ | | 42 | - |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | 5 | 538,218 | 2 |
| Դրամական միջոցներ | 6 | 142,030 | 10 |
| | | 680,290 | 12 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | | 1,242,002 | 12 |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական կապիտալ | 1,2 | 1,230,430 | 50 |
| Կուտակված վնաս | | (14,382) | (325) |
| | | 1,216,048 | (275) |
| Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Փոխառություններ | 7 | 10,227 | 227 |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | 8 | 15,727 | 60 |
| | | 25,954 | 287 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 1,242,002 | 12 |

***ԱՐՍԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ***
***Տնօրեն***

***ՔՐԻՍՏԻՆԵ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ***
***Գլխավոր հաշվապահ***

**ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
*«Գրանդ Մոթորս» ՍՊԸ*
*2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

| | Ծնթ. | 2012 հազար դրամ | 2011 հազար դրամ |
|---|---|---|---|
| Վարչական ծախսեր | 9 | (20,145) | (325) |
| Այլ եկամուտ | 10 | 7,125 | - |
| Այլ օգուտ/(վնաս), զուտ | 11 | (1,112) | - |
| Վնաս մինչեւ հարկումը | | (14,132) | (325) |
| Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս) | 12 | 75 | - |
| Տարվա զուտ վնաս | | (14,057) | (325) |
| Այլ համապարփակ եկամուտներ | | - | - |
| Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | | (14,057) | (325) |

***ԱՐՍԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ***
***Տնօրեն***

***ՔՐԻՍՏԻՆԵ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ***
***Գլխավոր հաշվապահ***

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
*«Գրանդ Մոթորս» ՍՊԸ*
*2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

| | Կանոնադրական կապիտալ | Կուտակված վնաս | Ընդամենը |
|---|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| Մնացորդն առ 1 հունվարի 2011 թ. | - | - | - |
| Կանոնադրական կապիտալի համալրում | 50 | - | 50 |
| Տարվա զուտ վնաս | - | (325) | (325) |
| Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2011 թ. | 50 | (325) | (275) |
| Կանոնադրական կապիտալի համալրում | 1,230,380 | - | 1,230,380 |
| Տարվա զուտ վնաս | - | (14,057) | (14,057) |
| Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012 թ. | 1,230,430 | (14,382) | 1,216,048 |

***ԱՐՍԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ***
***Տնօրեն***

***ՔՐԻՍՏԻՆԵ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ***
***Գլխավոր հաշվապահ***

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
*«Գրանդ Մոթորս» ՍՊԸ*
*2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտող տարվա վերաբերյալ*

| | 2012 հազար դրամ | 2011 հազար դրամ |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր | | |
| Տարվա վնաս | (14,057) | (325) |
| Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում) | (75) | - |
| Փոխարժեքային տարբերություններից վնաս/(օգուտ) | 1,112 | - |
| Գործառնական վնասը մինչեւ շրջանառու միջոցների փոփոխություն | (13,020) | (325) |
| Դեբիտորական պարտքերի փոփոխություն | (539,328) | (2) |
| Պաշարների փոփոխություն | (42) | - |
| Կրեդիտորական պարտքերի փոփոխություն | 613 | 60 |
| Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսք | (551,777) | (267) |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերման գծով վճարումներ | (546,583) | - |
| Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսք | (546,583) | - |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Կանոնադրական կապիտալի համալրում | 1,230,380 | 50 |
| Մուտքեր փոխառություններից | 10,000 | 227 |
| Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսք | 1,240,380 | 277 |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 142,020 | 10 |
| Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ | 10 | - |
| Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ | 142,030 | 10 |

***ԱՐՍԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ***
***Տնօրեն***

***ՔՐԻՍՏԻՆԵ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ***
***Գլխավոր հաշվապահ***

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 4.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: